Azg
Հայոց ազգ

21 ՓԵՏՐՈՒԱՐ 1996, ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 32 (1038)

ԱՄՆ. Բոբ Դոուլը, Պաս Բուխանանը եւ Ալեխանդրը իրար-քթի

Խտաղնաշփոթ հանրապետականների ճամբարում

Եթե դեմոկրատների ճամբարում նախագահ Բիլ Քլինթոնի թեկնածությունը նախագահական առաջիկա ընտրություններում անմրցակից է, ապա հանրապետականների շարքերում կատաղի խառնաշփոթ է տիրում, հատկապես ինչ վերաբերում է այդ կուսակցության նախագահական 8 թեկնածուներից առն վազն 3 առաջատարներին: Երեկ Նյու Հեմփշիրում կայացավ թեթեւ նախնական, բայց որոշիչ «ընտրություն», որի վերջնական արդյունքը հայտնի կդառնա այս առավոտ, վաղ ժամերին: Այնուհանդերձ, օրվա ընթացքում տեղի ունեցած սոցիոլոգիական բազմաթիվ հարցախույզների արդյունքում հանրապետականների առաջին եռյակը՝ Բոբ Դոուլը, Պաս Բուխանանը ու Լումար Ալեխանդրը գտնվում են իրար-քթի՝ գրեթե հավասար շարքի վրա:

Նրանց մոտիկից հետեւում է միլիարդատեր Ստիվ Ֆորբսը: Հիշեցնենք, որ Ս. Նահանգների նախագահական նախնական ընտրություններում Նյու Հեմփշիրը միշտ էլ եղել է որոշիչ տեսակետ: Վերջին 2 տասնամյակներին միայն Բիլ Քլինթոնն է այստեղ 2-րդ տեղը գրավել:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Կ. Բաբուրյան. «Մեր անկախության համար շատ բարձր գին ենք վճարել»

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 20 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍ: Ուղիղ ութ տարի առաջ, 1988 թվի փետրվարի 20-ին ԼՂՄՀ-ի մարզխորհրդի նստաշրջանը որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին: Անցած տարիների հեռվից գնահատելով այդ պատմական իրադարձության նշանակությունը՝ ԼՂՀ խորհրդարանի նախագահ կարեն Բաբուրյանը «Փաստի» թղթակցի հետ զրույցում նշեց, որ այն հիմնի դրեց Լեռնային Ղարաբաղի հանդեպ ընդունված «ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին» օրենքի վրա, ղարաբաղցիներն անցկացրին հանրաժողովրդական հանրաքվե եւ հայտնեցին իրենց անկախությունը: Կարեն Բաբուրյանի խոսքերով, «Ղարաբաղի խորացող վերը բացվեց, բայց հան գի որակյալ վիրաբույժներ չգտնվեցին, մեզ հակաբորբոքային միջոցների փոխարեն սկսեցին ռումբեր ու ականներ «նետել»»: Ղարաբաղցիներին դարձադրված *պատերազմը հարյուրավոր հոյակաղ տղաների կյանքի, չկայացած ընտանիքների, չծնված երեխաների գին արժեցավ: Մեր անկախության համար մենք շատ բարձր գին ենք վճարել, բայց գոհերն իզուր չեն եղել եւ այսօր մենք ունենք ճանաչված Լեռնային Ղարաբաղ, որի հետ անհնար է հաշվի չհաշվել: ԼՂՀ-ն ունի պետականության բոլոր ատրիբուտները՝ նախագահ, խորհրդարան, գործադիր եւ դատական համակարգեր եւ ի վերջո հեռխորհրդային տարածքի ամենամատուցակ բանակներից մեկը, որը հանդես է գալիս որպես հանրապետության բնակչության անվտանգության երաշխիք: Կարեն Բաբուրյանի խոսքերով, պայքարի եւ ԼՂՀ կայացման տարիներն օգնեցին ղարաբաղցիներին ազատվել անցյալի պատրանքներից, աճել եւ ամրանալ: «Այն ամենը, ինչի հասել է Լեռնային Ղարաբաղը, եզրափակեց նա, լիովին մեր ժողովրդի արժանին է, որն աննկարագրելի ծիգով կարողացավ պաշտպանել սեփական հողը»:

Երեւանի քաղաքապետն անցնում է նոր քաղաքապետարանի ձեւավորմանը

Քաղաքապետը շնորհակալություն հայտնեց իր նկատմամբ ցուցաբերված վստահության համար եւ նույնպես հույս հայտնեց, որ նոր կազմակերպվող քաղաքապետարանը կաբինետային կարգավիճակ կունենա՝ Երեւանի տնտեսության վերականգնման, Երեւանցիների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

Վարչապետը հատկապես կանգ առավ կառուցվածքային փոփոխությունների վրա, որ առաջիկայում պետք է կատարվեն քաղաքապետարանի համակարգում եւ պետք է բխեն հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների ոգուց:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Ղարաբաղյան շարժման 8-րդ տարեդարձի հանրահավաք

Երեկ, փետրվարի 20-ին, Երեւանի Ազատության հրապարակում մի քանի հազար մարդ, հավաքվելով, ավանդական հանրահավաքի, նշեցին Արցախյան ազգային-ազատագրական շարժման հերթական 8-րդ տարեդարձը: Ինչպես հայտարարեց հանրահավաքը վարող պրոֆ. Մերգեյ Մելքումյանը («Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ), այն կազմակերպել էին, բացի իրենցից, նաեւ ԱԻՄ-ը, ԱԺՄ-ն, Ազգային առաջադիմությունը, ԳԻԱՐՔՄ-ին, ՀԴԿ-ն, ՀԿԿ-ն, մտավորականների միությունը, ՍԻՄ-ը, «Ռիխտը», «Գարդման», «Շահումյան-Գեղարքունի» հայրենակցական միությունները, «Հայ կանանց դաշինք»: Մասնակցողների թվում էին ՀՌԱԿ-ը, «Ադդարություն» ուսանողական արհիմությունը, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ընդգծվեց, որ հրավեր է ուղարկվել նաեւ ՀՀՇ կառավարող կուսակցությանը, սակայն այն քաղաքական ուժի ներկայացուցիչները, որոնք ասպարեզ իջան ղարաբաղյան պահանջատիրության կարգախոսներով եւ այդ ալիքի վրա էլ հասան իշխանության, բացակա էին հանրահավաքից: «Արցախ-Հայաստան» կազմակերպության նախագահ Գեորգ Ալավերդյանի մի ընդարձակ անդրադարձ կատարեց արցախյան գոյամարտի պատմությանը եւ զարգացման փուլերին, այնուհետեւ ելույթներով հանդես եկան մյուս քաղաքական ուժերի ներկայացուցիչները: Ստորեւ համառոտ ներկայացնում ենք յուրաքանչյուրի խոսքից մի պատառիկ:

ՀՌԱԿ վարչության անդամ Համլետ Դալլաթյանի ելույթը տպագրվում է ամբողջությամբ:

ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ. «Պատերազմը սանձազերծել է Ադրբեջանի Հանրապետությունը, որպես ագրեսոր... Պատմությանը հայտնի չէ մի դեպք, երբ ագրեսորը, պարտվելով, իր կամքն է թելադրում: Այդ ագրեսորը նախ պետք է ոչնչացներ մուժի արցախահայությանը՝ իր շրջաններն ավերելու, հայաթափելու համար, էլ չենք ասում, որ պատասխանատվություն պիտի կրի Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի եւ այլ ջարդերի համար...»:

ՖԵԼԻՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ (Մտավորականների միություն). «Այժմ մեզ բոլորիս հետաքրքրում է այն հարցը, թե ինչպե՞ս կլուծվի Ղարաբաղի խնդիրը: Այսպիսի դեպքեր, համարյա նույն հաջորդականությամբ, տեղի ունեցան 1918-1920 թթ.: Այն ժամանակ դարձյալ հայ ժողովուրդը մի ոյան ուսում էր պատերազմը... բայց հետո մեր ժողովուրդը տուժեց: Հիմա էլ գնում են զարդնի խաղեր... Բանակցություններ են գնում Լաչինի շուրջը, Շուշիի շուրջը: Տագնաղ է առաջանում՝ ի՞նչ է, արդեն Քելբաջարի հարցը լուծվե՞լ է, Ֆիզուլիի հարցը լուծվե՞լ է...»:

Տես # էջ 2

1 միլիոնանոց բողոքի ցույց Մադրիդում

ՄԱԴՐԻԴ, 20 ՓԵՏՐՎԱՐ, WSJ: 1981 թ.-ին հեղաբեկման ծախող փորձից ի վեր Իսպանիայի մայրաքաղաքում այսօր ամավոտյան տեղի ունեցավ ամենամարդաբաս ցույցը, որին, ըստ ոստիկանության տվյալների, մասնակցում էր շուրջ 1 միլիոն մարդ: Բողոքի ցույցը ուղղված էր Մադրիդում եւ երկրի այլ շրջաններում վերջին շաբաթներին բասկ անջատողականների սատկացրած ահաբեկչական արարքների՝ կրկնոցների եւ ռմբահարության դեմ, որոնց հետեւանքով զոհվել են մարդիկ, սարսափի մթնոլորտ է ստեղծվել երկրում: Այսօր մարդաբաս ցույցեր տեղի ունեցան նաեւ Սեւիլիայում եւ Վալենսիայում:

Լոնդոն. Ռումբը պայթել է տեղափոխողի ձեռքո՞ւմ

ԼՈՆԴՈՆ, 20 ՓԵՏՐՎԱՐ, WSJ: Բրիտանական գաղտնի ոստիկանության Սկոթլանդ Յարդի կարծիքով, կիրակի օրը Լոնդոնի երկիաթուղիների ավտոբուսներից մեկում ռումբը պայթել է ժամանակից շուտ, հենց այն տեղափոխողի ձեռքում, որը եւ զոհվել է: Պայթյունը, որը երրորդն էր 10 օրվա ընթացքում, տեղի ունեցավ 1 եւ վիրավորել 9 հոգու: Ոստիկանության ենթադրությունը հիմնվել է ծառայում այն փաստը, որ պայթյունից առաջ նախազգուշացնող հեռախոսազանգը չէր հնչել, ինչպես սովորաբար լինում է «Իռլանդական գաղտնի բանակի» նման օրինակ բոլոր գործողություններից առաջ: Դիտորդների կարծիքով, «Բանակի» շարքերում պառակտում է տեղի ունեցել:

ԱՆԿԱՐԱ

Կոալիցիոն կառավարություն Թուրքիայում. Մեսութ Յըլմազը վարչապետ 10 ամսով

Թանսու Չիլլեր. Այդ կոալիցիան երկիրը անդունդ կտանի

Կառավարության կազմավորման ուղղությամբ հանրապետության նախագահ Սուլեյման Դեմիրելից հանձնարարական ստանալուց հետո Մայր հայրենիք կուսակցության նախագահ Մեսութ Յըլմազը վերջին մեկ շաբաթվա ընթացքում բազմաթիվ հանդիպումներ ունեցավ Մեջլիսում ամենաշատ ղաղաքական տեղերը գրաված իսլամամետ Բարգավաճում կուսակցության նախագահ Ներջմեթթին Էրբաքանի հետ: Բազմաթիվ տարաձայնություններ հարթելուց հետո, վերջապես փետրվարի 19-ին կայացավ Յըլմազ-Էրբաքան կառավարական հանդիպումը, որի արդյունքում հրապարակվեց Մայր հայրենիք եւ Բարգավաճում կուսակցությունների միջեւ կոալիցիա կազմելու հայտարարությունը: Կուսակցությունների ղեկավարներ հայտարարեցին, որ «վոխհամաձայնությունը վերջնականապես կայացել է, եւ մնում է ճնշարկել տեխնիկական բնույթի մի քանի երկրորդական հարցեր»: Ըստ բերված դայմանավորվածության համաձայն Մեսութ Յըլմազը 10 ամիս ժամանակով կգրաղեցնի վարչապետի դաշտը, իսկ կոալիցիայի կազմի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կտրվեն առաջիկա շաբաթ օրը, փետրվարի 24-ին:

Մայր հայրենիք եւ Բարգավաճում կուսակցությունների միջեւ փոխհամաձայնության փաստը քաղաքական մեկնաբանները գնահատեցին որպես հաղթանակ Մայր հայրենիք կուսակցության համար: Ինչպես հայտնի է, Մայր հայրենիք կուսակցությունը ստացավ ընտրությունների 19.8 տոկոս, մինչդեռ Բարգավաճում կուսակցությունը՝ 21.4 տոկոս: Ընտրությունից հետո Մայր հայրենիք կուսակցությունը ստանձնեց ընդդիմության դերը: Ինչպես հայտնի է, Մայր հայրենիք կուսակցությունը ստանձնեց ընդդիմության դերը: Ինչպես հայտնի է, Մայր հայրենիք կուսակցությունը ստանձնեց ընդդիմության դերը: Ինչպես հայտնի է, Մայր հայրենիք կուսակցությունը ստանձնեց ընդդիմության դերը:

ՄՈՍԿՎԱ

Հելմուտ Քոլ. «Ռուսաստանի նախագահի պաշտոնում Ելցինից լավ թեկնածու չկա»

Ավարտվեց Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլի պաշտոնական այցը Մոսկվա: Մեկնելուց առաջ նա մամուլի ասուլիսում իր զոհունակությունն արտահայտեց բանակցությունների արդյունքներից: Խոսելով հունիսի 16-ին Ռուսաստանում կայանալիք նախագահական ընտրությունների մասին, Քոլը նշեց, որ ցանկալի կլիներ այդ պաշտոնում վերընտրվեր «իր բնկեր Բորիսը», քանի որ, ինչպես ընդգծեց կանցլերը, Ելցինը ճշտորեն կատարում է պետությունների միջեւ կնքված համաձայնագրերի բոլոր պարտավորությունները: Որպես օրինակ Քոլը նշեց Գերմանիայից խորհրդային զորքերի դուրսբերման փաստը: Գերմանիայի ARD հեռատարածությանը տված հարցազրույցում Քոլը էլ ավելի բացահայտորեն ընդգծեց, որ Ռուսաստանի նախագահի պաշտոնում Ելցինից լավ թեկնածու չկա: Ելույթի վերջում Քոլը նշեց, որ քաղաքական կանխատեսումները շատ հանգամանքներ չեն իրականանում, նկատի ունենալով ընտրություններում տարած իր վերջին հաղթանակը, երբ նրան նախորդին կանխատեսել էին պարտություն:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Պրիմակովը հայտարարեց, որ Քոլի այցը Մոսկվա նշանակալի էր հետաքրքրություն Ռուսաստանում կայանալիք նախագահական ընտրություններում պաշտպանել Ելցինի թեկնածությունը:

Գ. Բ.

digitised by A.R.A.R.@

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Ղարաբաղյան շարժման 8-րդ տարեդարձի հանրահավաք

Սկիզբը էջ 1

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆ (ԱԻՄ-ի նախագահ, ԱԺ պատգամավոր). «Անցել են այն ժամանակները, երբ այս հարցերակն էր լուծելու հարցը: Որովհետեւ Արցախն արդեն կայացել է որպես պետություն եւ մենք հասել ենք այն փուլին, երբ Հայաստանը, հայ ժողովուրդը իր դիվանագիտությամբ պետք է վճռորոշ դեր կատարեն... Արցախին շատ ծանր հեռանկար է սպասում, եթե մեր դիվանագիտությունը շարունակի աշխատել այնպես, ինչպես մինչեւ այսօր, կամ կաղի այնպես, ինչպես մինչեւ այսօր...»:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ. (Հայկոմկուսի բյուրոյի անդամ). «Արցախի հարցում Հայաստանում գործող բոլոր կուսակցությունները հիմնականում միակամ են: Հայաստանում չկա մի կոմունիստ, որ Արցախը որեւէ կարգավիճակով պատկերացնի Ադրբեջանի կազմում...»:

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ԱԺՄ վարչության անդամ, ԱԺ պատգամավոր). «Այստեղ շատ խոսվեց Ռուսաստանի դերի մասին: Եկեք չափազանցություններ մեջ չընկնենք... Դուք ասում եք՝ նոր Միություն կկազմվի, եւ այդ ժամանակ Ղարաբաղն անկախ կլինի: Մենք ասում ենք՝ եթե նոր Միություն կազմվի, որպեսզի Ադրբեջանը մտնի նրա մեջ՝ ռուսները Ղարաբաղը կհանձնեն Ադրբեջանին... Եկեք մեր հաղթանակների աղբյուրը ուրիշի մեջ չփնտրենք... դա մենք պետք է լինենք...»:

ՍՈՒՐԵՆ ԶՈՒԼՅԱՆ (ԳԻԱՐՄ-ի նախագահ). «Մեծ պետությունների բարձրագույն պատասխանատու անձինք այսօր հայտարարում են, որ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է: Սա է հիմնական պահանջը, որին մենք պիտի համաձայնվենք պատասխան տանք: Բայց ինչո՞ւ միայն մենք: Իսկ որտե՞ղ է իշխանությունը...»:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀԴԿ նախագահ). «Արցախը պետք է լինի հայկական եւ անկախ... Չի կարելի անվերջ ասել, թե Արցախը ինքն է որոշում իր բախտը: Ամբողջ հայ ժողովուրդը պիտի որոշի իր բախտը: Որովհետեւ կա Արցախ՝ կա՛ Հայաստան, չկա՞ Արցախ՝ չկա՛ Հայաստան...»:

Հանրահավաքում ելույթներով հանդես եկան նաեւ այլ հոսքորներ: Ընդունվեց բանաձեւ, որով դատապարտվում է Արցախյան հարցում Հայաստանի իշխանությունների պարտվողական դիրքորոշումը եւ կոչ է արվում ազգովին սատար կանգնել ԼՂՀ զոյամարտին, խափանելու համար հերոսական արցախահայությանը կրկին ադրբեջանական գերիշխանությանը ենթարկելու ամեն տեսակ ենթադրություններ ու սադրանքները:

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՒԱԿ հանրաքվեական վարչության անդամ Համլետ Գալլահյանի խոսքը

Հայրենակիցներ, պատմական նշանակություն ունեցող որեւէ քաղաքական իրադարձության ամեն մի տարեդարձ առիթ եւ հնարավորություն է տալիս ճնշության առնելու եւ գնահատելու անցյալ ուղին ու ներկան, հստակեցնելու դիրքորոշումները, ճշտելու գործելակերպը, նախանշելու նոր խնդիրներ եւ առաջադրելու գործնական նոր քայլեր: Այս տրամաբանությամբ 1996 թ. փետրվարի 20-ը բացառություն չի կարող կազմել: Ուրիշ ուր տարի առաջ Լեռնային Ղարաբաղի հայությունը ոտի կանգնեց պահանջելու Ղարաբաղի միացումը Մայր Հայաստանի հետ, ինչը իբրեւ պատմական արդարության վերականգնման փաստ արժանացավ Հայաստանի եւ Սփյուռքի ողջ հայության միահամուռ պաշտպանությանը, նյութական ու բարոյական աջակցությանը: Արդյունքում ազգային ազատագրական պայքարի զարգացման տրամաբանությունը հանգեցրեց մի իրավիճակի, երբ հռչակվեց եւ հազարավոր մարդկանց կյանքի, արյան ու զրկանքների գնով հաստատվեց Լեռնային Ղարաբաղի հանրաքվեությունը, որը այսօր իսկապես կայացել է որպես ինքնին պետություն՝ իր բոլոր անկախ տելի հատկանիշներով, ու նաեւ վերականգնվող արդյունաբերությամբ, գյուղատնտեսությամբ, շինարարությամբ, վերածնվող գյուղերով, քաղաքական, մշակութային կյանքով, որոնք Ղարաբաղի ազգաբնակչության վերադարձի հիմքն են հանդիսանում:

Հիմնահարցի լուծման եւ դրա վերաբերյալ ԱՊՀ ղեկավարների խորհրդի հայտարարության կապակցությամբ ՀՈՒԱԿ հանրաքվեական վարչությունը իր դիրքորոշման մասին հանրությանը տեղյակ է պահել մամուլի միջոցով դեռեւս մոտ մեկ ամիս առաջ: Մեր դիրքորոշումը այս հարցում անփոփոխ է: Ղարաբաղի գոյամարտը դիտարկելով որպես հայ դասի մի մաս, Հայաստանի Ռազմավար ազատական կուսակցությունը ԼՂ հանրաքվեության հռչակումից ի վեր միշտ էլ հանդես է եկել հօգուտ նրա ճանաչման: Մենք գտնում ենք, որ ԼՂՀ ժողովուրդը փաստորեն արդեն վճռել է իր ճակատագիրը ինքնորոշման սկզբունքի հիման վրա եւ գոյություն ունեցող օրենքների շրջանակներում անցկացրած հանրաքվեի արդյունքներով: Այնուհետեւ նա իր հազարավոր զավակների գոհերի գնով պաշտպանել է իր հարազատ հողը, պատիվն ու արժանապատվությունը բռնանալ ոչնչացությունից եւ մոտ երկու տարի է, ինչ հրադադարի պայմաններում փորձում է բանակցությունների միջոցով գտնել հիմնախնդրի վերջնական կարգավորման խաղաղ ճանապարհը: Մենք գտնում ենք, որ ԼՂՀ հիմնախնդրի լուծումը քաղաքական տեսակետից բավական բարդ է: Լեռնային Ղարաբաղը Բոսնիա չէ, եւ ոչ էլ Չեչնիա: Եւ այն տեղ իրականացվող տարբերակների կիրառումը այստեղ անընդունելի է: Հայաստանի Ռազմավար ազատական կուսակցության Հանրաքվեական վարչությունը Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ճանապարհը այսօր տեսնում է բանակցությունների զարգացման պյանիսի ընթացքում, որում ԼՂՀ ժողովրդի կամքը չոչնչահարելու պայմաններում պետք է անվերապահորեն հաշվի առնվեն հիմնահարցի առանձնահատկությունները, ստեղծված իրողությունները:

Հիմնախնդիրը պահանջում է նաեւ համապատասխան իշխանական կառույցների, բոլոր կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հայրենակցական միությունների միասնական, համակարգված, համաձայնեցված քայլեր, մի հանգամանք, որը ցավոք մինչ այժմ գործնականում անտեսվել է իշխող կուսակցության եւ իշխանական կառույցների կողմից, այն էլ՝ հիմնախնդիրը Ադրբեջանի օգտին լուծելու նպատակով Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վրա արտաքին ուժերի, հատկապես վերջերս ու օրեցօր ճնշման պայմաններում: Հարկ է նշել նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը որեւէ քաղաքական խմբի, կուսակցության, կառավարության մենաշնորհը չէ եւ չի կարող հանդիսանալ: Անթույլատրելի է, ավելին, հանցավոր է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը շահարկել քաղաքական նպատակներով: Ղարաբաղյան հիմնախնդիրը համազգային է իր հնչեղությամբ եւ բովանդակությամբ: Հետեւապես, հարցի լուծումը պահանջում է համընդհանուր վերաբերմունք, որի հիմքում պետք է լինեն Լեռնային Ղարաբաղի Հանրաքվեության հերոսական ժողովրդի անսասան կամքը, իրավունքները:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Փորձ չունեցող մարզպետներին կօգնեն փորձ ունեցող տեղականները

Երեկ Ազգային ժողովի անդամ նորընտիր մարզպետների մեծ մասն այդպես էլ չերեւաց նիստերի դահլիճում: Ըստ մեզ հասած տեղեկությունների, նրանք մեկնել էին շրջաններ՝ ծանոթանալու իրենց մարզերին, իսկ ավելի ճիշտ՝ տեղական իշխանություններին: Նրանցից ոմանք, որ եկել էին կատարելու իրենց պատգամավորական պարտականությունները, առայժմ ձեռնպահ մնացին որեւէ մեկնաբանություն անելուց: Մինչդեռ, եթե վերհիշենք մամուլի հրապարակումները, արդա մարզպետների աթոռների համար տարվող այսպես կոչված «նախընտրական» պայքարը ենթադրում էր, որ այն պետք է ներառի ոչ միայն իշխանամետ քաղաքական ուժերին բավարարելու խնդիրը, այլեւ ներիշխանական տնտեսական որոշակի խմբերի շահերը: Համենայնդեպս, նոր նշանակումները ցույց են տալիս, որ դրանք միանշանակ չեն ընդունվել նաեւ իշխող կուսակցության պատգամավորների կողմից: Իսկ «Հանրապետություն» միավորման անդամ, Հանրապետական կուսակցության նախագահ Աշոտ Նավասարդյանն այն կարծիքին է, որ Սահմանադրության մեջ որեւէ նշում չկա, ըստ որի պետք է մարզպետների նշանակման ժամանակ հաշվի առնվեր քաղաքական կուսակցությունների տեսակարար կշիռը:



– Դա նախագահի եւ կառավարության խնդիրն է եւ այդպես էլ առվել է: Ուղղակի որոշակի ցանկություններ են արտահայտել որոշ կուսակցություններ՝ կողմից, որպեսզի մարզպետի պաշտոնը դիտարկվեր իբրեւ քաղաքական պաշտոն եւ քաղաքական ներկա ունեցող անձինք նշանակվեին:

– Դուք նկատի ունեք քաղաքական կուսակցությունների առաջին դեմքերի՞ն:

– Գուցե այդպես: Բայց դա դեռեւս չի նշանակում, թե մեր կուսակցության կարծիքն է: Դա բույլ արտահայտված տեսակետներից մեկն է եղել, որը չենք պնդել եւ չեմ կարծում, թե դրա շուրջ սուր, բուռն վեճեր են տեղի ունեցել: Եղել են անհատական, անձնական մակարդակի խոսակցություններ, բայց մեր կուսակցությունը մարզպետների հարցում նման նկրտումներ չի էլ ունեցել: Իմ վերաբերմամբ է, լավ են, թե վատ մարզպետների նշանակումները, կարծում եմ, որ քաղաքական որոշում է կայացվել՝ օգտագործելով ոչ քաղաքական լծակները: Օրինակ, նշանակված մարդկանցից եւ ոչ մեկը քաղաքական գործիչ չի եղել: Այսինքն ընտրվել է վարչական (գործնական) գործիչներ ընտրելու տարբերակը: Մեծ մասն այդպիսի անցյալ ունի, նույնիսկ խորհրդային տարիներին դեկավար պաշտոններ զբաղեցնելու փորձով, մի մասը վերջին տարիներին է զբաղեցրել: Կարծեմ միայն մեկն է, որ այդպիսի պաշտոն չի զբաղեցրել, Աշոտ Սարգսյանը, որը ազնվագույն անձնավորություն է, եւ կարծում եմ, փորձ ունեցող տեղակալը նրան բավարար կլինի, որպեսզի կարողանա արագ իրականացնել իր պարտականությունները:

– Իսկ կուսակցական պատկանելությանը ինչպե՞ս եք վերաբերվում:

– Դա ձեւական է: Օրինակ, բերում կարդացի, թե մարզպետներից երկուսը ՌԱՄ (ԼԴ)-ից են: Իմ կարծիքով, նրանք կարգին կուսակցական լինելու ժամանակ էլ չեն ունեցել: Ժամանակին այդ կուսակցության շարքերում որեւէ ակտիվություն չեն ունեցել: Մարզպետներից ոմանք էլ Հայոց համազգային շարժման ներկայացուցիչներ են: Օրինակ, Սեդրակ Հովհաննիսյանը նույնպես ակտիվ կուսակցական գործիչ չի եղել: Նույնը կարող եմ ասել նաեւ Աշոտ Սարգսյանի մասին: Այնպես որ, պետք է հասկանալ, որ նշանակումները կատարվել են կուսակցական սկզբունքով: Ընդհանրապես, մտահոգությունն այն է եղել, որ նրանք լինեն լավ վարչական աշխատողներ: Մեզ մնում է բարին կամենալ բոլորին:

Մեր կողմից միայն ավելացնենք, որ մարզպետների ինստիտուտին դեռեւս լավ ծանոթ չեն հենց խոնարհ մարզպետները: Հասկանալի դեպք, մեր մի քանի թանկագին զրույցներից այդպիսի տպավորություն ստացանք: Այդ անորոշությունը պայմանավորված է նաեւ ոչ-տարական իմաստավարման մեծագույն օրենքի բացակայությամբ, որն անշուշտ մեծ դժվարություններ առաջ կբերի երկարատեւությունից մարզպետությունների անցման փուլում: Այդ փուլում, առաջին հերթին կստեղծվեն տեղական հանձնաժողովներ, բանգի իշխանության փոխանցումը կամ ամենի ճիշտ ասկախ վիճակը կդժվարացնի տեղական իշնակառավարումը:

ՎԱՀԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Երկժամյա էներգամատակարարումը կշարունակվի մինչեւ փետրվարի 25-ը

Մայրաքաղաքի բնակչությանը երկժամյա անվճար էլեկտրաէներգիայի մատակարարման եվրահամայնքի ծրագիրը, որ նախատեսվում էր ավարտել 1996 թվականի փետրվարի 19-ին, երկարաձգվում է մեկ շաբաթով՝ մինչեւ փետրվարի 25-ը: Ինչպես հայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարության մամուլի ծառայությունից, երկարաձգման առիթը առանձին թաղամասերում եւ բնակելի շենքերում տեղի ունեցած վթարների պատճառով: Եվրահամայնքի ծրագրով նախատեսված էլեկտրաէներգիայի ընդհանուր հանգիստ ոչ լրիվ սղաստումն է քաղաքի բնակչության կողմից:

Անվճար էլեկտրաէներգիայի ստացողներ են դարձել Հանրապետության 47 տարածքներում գտնվող 1000-ից ավելի բնակելի շենքերի բնակիչները: Էլեկտրաէներգիայի ստացողներ դարձան նաեւ Հանրապետության 47 տարածքներում գտնվող 1000-ից ավելի բնակելի շենքերի բնակիչները: Էլեկտրաէներգիայի ստացողներ դարձան նաեւ Հանրապետության 47 տարածքներում գտնվող 1000-ից ավելի բնակելի շենքերի բնակիչները:

Ա. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Պիտանի եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (374-2) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍՍԱՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE հանձնակատարչային գործակալություն / 581841
Ոճը եւ տարածումը ՊՈՍԵԼ ԴԱԼԼԱԲԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutiun st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՓԱՐԻԶ

«Հայաստանի հետ մեզ համերաշխության ավանդույթներ ունենք»

Ասում է Ֆրանսիայի ԱԳՆ խոսնակը

Օրերս Ֆրանսիայի արտգործնախարարության մամլո քարտուղարի տեղակալը Քե դ'Օրսեում հրավիրվող ամենօրյա ճեպազրույցներից մեկի ժամանակ անդրադարձել է Ֆրանս-հայաստանյան հարաբերություններին: Այս ելույթը, որի սղագրությունը մեզ տրամադրել է Ֆրանսիայի ԱԳՆ լրատվության վարչությունը, կազմված էր ՀՀ արտգործնախարարի հանդիպումներին Փարիզում Ֆրանսիայի արտաքին գաղտնական գերատեսչության ղեկավար Էրվե դը Շարետի ու եվրոպական գործերով պատվիրակ-նախարար Միշել Բառնյեի հետ:

Ֆրանսիայի ԱԳՆ-ի ներկայացուցիչը հիշեցրել է Միշել Բառնյեի անցյալ տարվա նոյեմբերին Երևան կատարած այցի մասին, որի առիթը Հայաստանում ֆրանսիական դեսպանատան բացումն էր: Խոսնակը փաստեց, որ Բառնյեն հանդիպել է ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԳ, Ֆինանսների, ԱՊՀ, եվրամիության ու միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ, ինչպես նաև կաղի նախարարների, Ազգային ժողովի նախագահի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ: Ստորագրվել են համաձայնագրեր ներդրումների փոխադարձ պաշտպանության և մշակութային համագործակցության վերաբերյալ:

Ֆրանսիայի ԱԳՆ խոսնակը նշել է, որ ՀՀ արտգործնախարարի այցը Փարիզ ներգծվում է Հայաստանի հետ Ֆրանսիայի ունեցած սերտ կապերի շրջանակի մեջ: Ֆրանսիան առաջիններից էր, որ 1991 թվականին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը և Երևան դեսպան ուղարկած առաջին պետություններից էր: Հայ և ֆրանսիական ժողովուրդների միջև կապերը մշակութային ու պատմական արմատներ ունեն:

Վաղուց ի վեր ֆրանսիական մշակութային ազդեցություն կա այդ շրջանում: Ֆրանսահայ համայնքը հասնում է 400 հազարի: Հայաստանի հետ մեզ համերաշխության ավանդույթներ ունենք, ասել է խոսնակը: Փարիզյան այս հանդիպումներն ապահովելու են անդրադառնալու մեր երկրում հարաբերություններին: Հայտնի է Հայաստանի դիրքը շրջանում կենսունակության ու ուշադրության: Մենք նվիրահա 20 ամիս տևող հրադադարը դրական երևույթ է: Մենք կանգնած էինք ԵԱՀԿ Մինսկի խմբի ակումբների մոտ և պատասխանում ենք այդ խմբի ջանքերը բանակցությունների միջոցով խաղաղական լուծում գտնելու նպատակով, լուծում, որը կիարգի պետությունների տարածքային ամբողջականությունը և կաղահովի Լեռնային Ղարաբաղում գտնվող հայերի անվտանգությունը:

Խոսելով հայկական ատոմակայանի մասին Ֆրանսիայի ԱԳՆ ներկայացուցիչը նշել է, որ երևանում գտնվելիս եվրոպական գործերով պատվիրակ նախարար Բառնյեն անդրադարձել է ԱԷԿ-ի խնդրին: Նա մեջբերեց վերջինիս խոսքերի հետ: Մենք պատրաստ ենք համագործակցել Հայաստանի հետ, եթե նա այդ ցանկանում է: Նույնը նախատեսում են միջազգային տնտեսական կազմակերպությունները: Ֆրանսիան ունի փորձ միջուկային անվտանգության բնագավառում, միջուկային անվտանգության ոլորտում փորձագիտություն և պատրաստ է համագործակցության: Մենք արդեն համագործակցում ենք բախումների մշակման ու պահեստավորման ոլորտում, դրանց համար պահեստարան կառուցելու նպատակով Ֆրանսիայի գանձապետարանը 15,5 մլն. ֆրանկի նվիրատվություն է կատարել Հայաստանին, նշել է Քե դ'Օրսեի ներկայացուցիչը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼԻՅԱՆ

ՎԱՆԻ ՄԵԾ ԴԵՊՔ

Հունիսին կլրանա Վանի 1896 թ. ինքնապաշտպանության 100-ամյակը

Այս տարվա հունիսին լրանում է Վանի Մեծ դեպքի՝ 1896 թվականի հայերի ինքնապաշտպանության 100 ամյակը:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տարեգրության մեջ առաջնային տեղ գրավող 1896 թվականի Վանի հերոսական դիմադրությունը անջնջելի տպավորություն է թողել ժամանակակիցների վրա, փորձառություն եւ դաս հանդիսացել 1915 ի Սասունի հերոսամարտի հաղթանակի համար: Մեր ավագները եւ ծնողները Վանի Մեծ դեպքը եւ նրա մասնակիցների անունները միշտ հիշել են ա ռանձնահատուկ հպարտությամբ ու ակնածանքով:

«Վասպուրական» եւ «Վասպուրականի նոր սերունդ» հայրենակցական միությունները պատմական կարեւոր իրադարձության 100 ամյակը տոնելու են համատեղ կազմակերպվող միջոցառումներով: Հոբելյանն առավել բովանդակալից նշելու նպատակով դիմում ենք մեր հայրենակիցներին հետեւյալ կոչ-խնդրանքով:

Սիրելի հայրենակիցնե՛ր, եթե ձեր ընտանեկան հավաքածուներում եւ արխիվներում կան 1896 թվականի Վանի ինքնապաշտպանությանը վերաբերող նյութեր, գրառումներ եւ լուսանկարներ, խնդրում ենք դրանց կրկնօրինակները կամ պատճենները տրամադրել մեզ՝ հոբելյանական ցուցահանդեսի համար:

Կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 52 08 28, 56 24 75, 28 67 26:

Ընդունեք մեր կանխահայ շնորհակալությունը:

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
«Վասպուրական» հայրենակցական միության նախագահ
ՄԱՐԻՆԵ ՎԱՀՐԱՄՅԱՆ
«Վասպուրականի նոր սերունդ» հայրենակցական միության նախագահ

ՀԱՄԱՌՈՏ

Մարզիչներն արդեն անցնում են գործի

Երեկ նոր կարգավիճակում մարզկենտրոն Իջեւան իր առաջին այցը կատարեց Տավուշի մարզիչ Պավլիկ Ասատրյանը, որին Իջեւանի, Նոյեմբերյանի եւ Տավուշի շրջանների գործադիր մարմինների ղեկավար ափսառակիցներին ներկայացրեց ՀՀ տարածաշրջանային նախարար Ռուդիկ Բարսեղյանը: Նախարարն ու մարզիչը եղան Իջեւանի շրջխորհրդի եւ քաղխորհրդի գործկոմներում, քաղաքային գբոսայգում, զրուցեցին բնակիչների հետ: Այսպիսով շրջաններում վերջին ամիսներին տիրող անորոշությունից հետո ուսով իր գործունեությունը կսկսի մարզիչ-տարանը:

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀՇ-ՀՅԴ համատեղ միջոցառում. Բոլշեւիզմի ուրվականը սպասվե՞ց

«Հայք» թերթի երեկվա համարը տեղեկացնում էր ՀՀՇ-ՀՅԴ համատեղ միջոցառման մասին: Գաղտնիում նշել են 21 թ. փետրվարյան ապստամբության 75 ամյակը: Մեկ տարուց ավելի խոր հակամարտության մեջ գտնվող երկու կուսակցությունների համատեղ հանդես գալու դրդապատճառը պետք է փնտրել «Անսալով փետրվարյան ապստամբության խորհրդին...» հրապարակման տողերում. «Այսօր Ռուսաստանում վերստին գլուխ է բարձրացնում բոլշեւիզմը, եւ փետրվարյան ապստամբությունն այդ իմաստով մեր սերնդին ուղղված մեծ խորհուրդ ունի իր մեջ»: Կամ՝ «Բոլշեւիզմի վտանգի դեմ համախմբվելու, ծնած բեռած անկախությունը, հայոց պետականությունը փայփայելու...» պատգամն արվեց: Ակամա հիշեցինք նախորդ տարի կրկին Գաղտնիում կազմակերպված «համաժողովրդական» միջոցառումը, որը խափանելու համար ոտի էր հանվել Կոտայքի շրջանի գրեթե ողջ ոստիկանությունը:

Ճանապարհների վերականգնման ծրագիրը վերահսկողության տակ

Հայաստանում է գտնվում Համաշխարհային բանկի «Հայաստանի ճանապարհներ» վերականգնման ծրագրի վերահսկողական պատվիրակությունը՝ ծրագրի պատասխանատու Անդրես Բոնդի գլխավորությամբ: Բանակցություններն ու ֆնարկումը կտեւեն մեկ շաբաթ: Ինչպես հայտնեց ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրեն Ն. Էլարյանը, ծրագիրը նախատեսված է 4 տարվա համար, որի ընթացքում կվերականգնվեն հանրապետական նշանակության 1000 կմ մայրուղիներ: Հիմնական ուշադրություն կդարձվի Հայաստանն Իրանին եւ Վրաստանին կապող ճանապարհներին:

Ա. Գ.

ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բաժնետիրական ընկերությունների մասին օրինագծին խիստ շահագրգիռ մոտեցում

Աժ փետրվարի 20-ի նիստում քարոզկվեց բաժնետիրական ընկերությունների մասին 33 օրենքի քննարկումը: Քննարկումը վերապահությամբ կարելի էր բուռն համարել եւ անվերապահորեն խիստ շահագրգիռ: Բնականաբար այդպես էլ պիտի լիներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատգամավորների մեծ մասը տնտեսական ոլորտի տարբեր մակարդակի պաշտոնյաներ էին: Քվեարկության արդյունքում 99 «կողմ» օրենքն 1-ին ընթերցմամբ ընդունվեց:

Օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշվում է, «Սույն օրենքը սահմանում է բաժնետիրական ընկերության ստեղծման, գործունեության իրականացման եւ դադարեցման հիմքերը, բաժնետերերի, պարտատերերի եւ երրորդ անձանց օրինական շահերի երաշխիքները ու պաշտպանության կարգը»:

Այդ օրինագծի 3-րդ հոդվածի, «բաժնետիրական ընկերություն է համարվում ընդհանուր բաժնային սեփականության վրա հիմնված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունը, որի կանոնադրական հիմնադրամը բաժանված է նախօրոք սահմանված քանակի բաժնեմասերի»:

Օրինագծում սահմանվում են դուստր եւ կախյալ ընկերությունների իրավասությունները, պարտավորությունները: «Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերության պարտավորությունների դիմաց»: Մինչդեռ «հիմնական ընկերության մեղքով դուստր ընկերության անվճարունակության (սնանկացման) դեպքում, հիմնական ընկերությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտավորությունների դիմաց»:

Օրինագծում սահմանվում են նաեւ ընկերության վերակազմավորման, բաժանման եւ առանձնացման, լուծարման, գույքի բաշխման եւ այլ սկզբունքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինագծի քննարկման ժամանակ որոշակի առարկությունների տեղիք տվեցին պետական բաժնետիրական ընկերություններին վերաբերող հոդվածները, դրանք քվեարկությունից հանվեցին:

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՇԵՈՐՀԱՆԴԵՍ

Ռուկայական տնտեսության առաջին հայերեն դասագիրքը՝ «Տնտեսագիտություն»

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) գիտահետազոտությունների եւ զարգացման կենտրոնը լույս է ընծայել աշխարհահռչակ տնտեսագետ Փ. Սամուելսընի եւ Վ. Նորհաուսի «Տնտեսագիտություն» գրքի առաջին հատորը: Այդ կաղակցությամբ երեկ ՀԱՀ-ում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը: Թարգմանիչը եւ խմբագիրն է տնտեսագիտության թեկնածու Վ. Հայրապետյանը, ինչպես նաեւ ՀԱՀ թարգմանության բաժնի աշխատակիցներ դոկտ. Ա. Աղաբեկյանը, դոցենտ Յու. Սուվարյանը, Վ. Ազանյանը: Տպագրությունն իրականացվել է «Աստղիկ» հրատարակչությունում: Գիրքը հիմնադրողն է Փ. Հոֆենի «Ինչպես վարել սեփական գործը», Փ. Դրաքերի «Ձեռնարկիչը եւ նորի ստեղծումը», Ռ. Հայլբրունի եւ Լ. Թարոսի «Տնտեսագիտություն բոլորի համար», Ք. Ուլբրիխթի «Անգլերեն-հայերեն եւ հայերեն-անգլերեն իրավաբանական բառարանից» հետո: Գրքի հրատարակությանը օժանդակել են ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունը (USIA) եւ «Եվրասիա» հիմնադրամը: Ինչպես ընդգծվեց գործակալությունը գրքերի բարգմանության խնդիրը համարում է Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստող կարեւոր օղակներից մեկը: «Տնտեսագիտությունը» առաջին անգամ հրատարակվել է 1948-ին եւ ունեցել 14 ամերիկյան հրատարակություն, թարգմանվել աշխարհի 40-ից ավելի լեզուներով: Այն համարվում է աշխարհի լավագույն տնտեսագիտական դասագրքերից մեկը, եւ կլինի առաջին հայալեզու ձեռնարկը տնտեսագիտական, ճարտարագիտական, հասարակագիտական ու բնագիտական բուհերի, ինչպես նաեւ այլ բնագավառների աշխատողների համար: Հավատացվեց, որ տնտեսագիտության ոլորտի գիտակները մասնագետ են ամենանահրաժեշտ գրքերը փնտրելու եւ թարգմանելու հարցում: Ի դեպ, ասվեց, որ «Տնտեսագիտությունը» 1961-ին գաղտնի տպագրվել է նախկին Խորհրդային Միությունում եւ բաժանվել շատ նեղ շրջանակների: Կարեւորվեց, որ թարգմանությունն արված է շատ բարձր վարակով: Գրքի վերջում զետեղված է տնտեսագիտական տերմինների 600-ից ավելի բառերի բացատրական բառարան: Ինչպես նշեց թարգմանիչ Վ. Հայրապետյանը, գրքին դրատ է 3000-ից ավելի բառեր ընդգրկող տնտեսագիտական բառարանը, որի հրատարակումը նույնպես օժանդակության է կարոտ: Ինչպես նկատեցինք, թարգմանիչը խիստ հետաքրքրված էր հայերենի մաքրությամբ եւ կարծում ենք, «Տնտեսագիտության» ընթերցողը սփոփված է լինելու բառարանում որոնել, թե ինչ է նշանակում հայերեն թարգմանված տերմինը: Ամռան վերջին արդեն լույս կտեսնի գրքի երկրորդ հատորը «Միկրոտնտեսագիտությունը»: Շնորհանդեսին ներկա հավաքածուները հատատեցին, որ համագործակցությունը կշարունակվի:

Գիրքը տպագրվել է 5000 օրինակով եւ արժե 4000 դրամ: Սա, անշուշտ, շատ բարձր գին է, որը հրատարակիչները բացատրում են նաեւ գիրքը միայն հարցաթերթերին ուղղելու ցանկությամբ, որպեսզի պատասխանները մաքուր այն չլինեն: Տպաքանակի մի մասը հատկացվել է գրադարաններին, ուսանողներին եւ վիճակի մարդկանց համար:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հայկական

ՍՅՈՒՆԻՔ

Արցախցուն նյութականից ավելի հարկավոր է բարոյական օգնություն

Քերոլայն Քոքս. Ղարաբաղը չի կարող մնալ Ադրբեջանի ենթակայության տակ: Դա պիտի գիտակցի նաեւ Ադրբեջանը

Վերջերս ԼՂՀ իր հերթական 27-րդ այցը կատարեց Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը: Նա սիրով համաձայնեց պատմել իր առրումների, մտահոգությունների մասին:

- Ա՞ե չի եղել գիտական, գրական, հասարակական-քաղաքական այն գործիչների թիվը, որոնք մարդասիրաբար իրենց ձայնը բարձրացրել են ի նպաստ հայ ժողովրդի: Ինչպե՞ս սկսվեց Ձեր բարեկամությունը Արցախի եւ հայ ժողովրդի հետ:

- Մի քանի տարի առաջ ժամանեցի Մոսկվա մասնակցելու մարդու իրավունքների դաշտպանությանը նվիրված ժողովին, որտեղ ավելի մոտիկից ծանոթացա մեծ հումանիստ Անդրեյ Սախարովի հետ: Նրա առաջարկությամբ այցելեցի Հայաստան, այստեղ տեսա Ադրբեջանից տեղահանված, անմարդկային չարչարանքների ենթարկված Շահումյանի, Գետաշենի եւ Ղարաբաղի այլ շրջանների անմեղ բնակիչներին: Որոնցի իմ դաշտկերացումները հստակ լինեին, 1991 թ. հուլիսին մեկնեցի Ադրբեջան: Տեղում հայության արդար դատանոցը:

- Ինչպես ասացի իմ հիմնական աշխատանքը ճնշված ժողովուրդների իրավունքներ դաշտպանելն է:

Այսօր էլ շարունակում եմ քաղաքական շրջանակներում խոսել եւ ներկայացնել Հայաստանը եւ Արցախը: Քանի որ շատ քաղաքական գործիչներ ոչ միայն չեն գնում, այլեւ խուսափում են գնալ Արցախ, ուստի իմ դարտքն եմ համարում տրամադրությունները եւ անհանգստությունս ներկայացնել նախ անգլիական դաշտլամենտին: Միաժամանակ հրաշարակում ենք լուսանկարներով առանձին դաշտկերագրքեր, գրքույկներ եւ ուղարկում արեւմտյան բոլոր կազմակերդությունների, դեսպանությունների, ՄԱԿ-ին: Ինչպես գիտեք, Ադրբեջանը հայտարարություն է արել, որ Հայաստանում եւ Արցախում հինգ հազարից ավել գերիներ կան, մենք համոզվել ենք, որ այդ հայտարարությունը կեղծ է: Ադրբեջանը դաշտերազմի դաշտում զոհվածների մարմիններ չվերադարձրեց նրա հարազատներին, հետաքրքրելով այլ նպատակներ, խոյս տալով նաեւ խղճի դաշտասխանատվությունից: Իսկ մեր հիսդոնական ազնիվ խիղճը դաշտանջում է արեւմտյան տերությունների ներկայացնել ճշմարտությունը վկայի, ակամատեսի աչքերով ու ադրումներով:

- Այսօր Ղարաբաղում ոչ դատերազմ է, ոչ խաղաղություն: Ինչդիսի՞ն է Ձեր մոտեցումը այս անորոշ իրավիճակին:

- Ինձ համար հստակ է, որ Ղարաբաղը չի կարող մնալ Ադրբեջանի ենթակայության տակ: Ես ուզում եմ, որ այդ միտքը վերջապես հասկանան ու գիտակցեն ոչ միայն մեծ տերությունները, այլեւ Ադրբեջանը: Ղարաբաղի ժողովրդի դաշտանջը միանգամայն արդար է եւ նա տեր դիտի կանգնի իր իսկ որոշմանը: Ղարաբաղի ինքնորոշումը հաստատն հիմքերի վրա դնել եւ դահել:

- Ձեր հանդիդումներում Դուք համոզվեցիք, որ արցախցուն նյութականից ավելի հարկավոր է բարոյական օգնություն:

- Շնորհակալ եմ այդ հարցի համար: Պետք է խոստովանեմ, որ այդ զգացողությունը ես ադրել եմ ամեն քայլափոխի: Այս այցելությանս, երբ առիթ ունեցա հանդիդելու Գետաշենից, Շահումյանից, Չարդախլուից տեղահանված փախստականների, որոնք կարգնելով տուն-տեղ, նյութական միջոցներ, ադրելու տարական դայմաններից զրկված եկել էին եւ հաստատվել Մարտակերտի շրջանի ոմբակոծությունից հիմնովին ավերված տներում նոր կյանք սկսելու մտադրությամբ, մեզ խնդրում էին, որ մեր ադդբներում հիշենք իրենց: Բոլորի ուրախությունը նույնն էր, լուսաբացը դիմավորել մայր հողի վրա: Այդ նույն զգացումն էին ադրում Ստեփանակերտի ծերանոցի միայնակները: Չնայած իրենց տխուր դայմաններին, նրանք ուրախ ու հանգիստ էին, որ դիտի մեռնեն իրենց հողի վրա: Հիշելով նրանց բարի ու դայծառ դեմքերը, կարդալով աչքերի մեջ հոգու մաքրությունը, ազնվությունը, լսելով քաղցր խոսքերը, սիրտս լցվում է խորունկ գոհունակությամբ եւ մխիթարությամբ:

- Արցախցիները իրենց սիրո եւ հարգանքի տուրքը մատուցեցին Ձեզ շնորհելով Ստեփանակերտ քաղաքի դատվավոր քաղաքացու կոչումը: Ինչպե՞ս ընդունեցիք այդ կոչումը Դուք եւ Ձեր ընտանիքի անդամները:

- Շնորհակալ եմ այդ հարցի համար: Պետք է խոստովանեմ, որ այդ զգացողությունը ես ադրել եմ ամեն քայլափոխի: Այս այցելությանս, երբ առիթ ունեցա հանդիդելու Գետաշենից, Շահումյանից, Չարդախլուից տեղահանված փախստականների, որոնք կարգնելով տուն-տեղ, նյութական միջոցներ, ադրելու տարական դայմաններից զրկված եկել էին եւ հաստատվել Մարտակերտի շրջանի ոմբակոծությունից հիմնովին ավերված տներում նոր կյանք սկսելու մտադրությամբ, մեզ խնդրում էին, որ մեր ադդբներում հիշենք իրենց: Բոլորի ուրախությունը նույնն էր, լուսաբացը դիմավորել մայր հողի վրա: Այդ նույն զգացումն էին ադրում Ստեփանակերտի ծերանոցի միայնակները: Չնայած իրենց տխուր դայմաններին, նրանք ուրախ ու հանգիստ էին, որ դիտի մեռնեն իրենց հողի վրա: Հիշելով նրանց բարի ու դայծառ դեմքերը, կարդալով աչքերի մեջ հոգու մաքրությունը, ազնվությունը, լսելով քաղցր խոսքերը, սիրտս լցվում է խորունկ գոհունակ-

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՑՆԵՐ

Մամուլի վիճակը հասարակության առողջության ասդիճանն է

«Ես կնախընտրեի բերքերն առանց կառավարության, քան կառավարությունն առանց բերքերի»:

Թոմաս Ջեֆերսոն
ԱՄՆ-ի երկրորդ նախագահ

Մամուլի ազատությունը համաշխարհային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է: Զանգվածային հասարակական գիտակցության ձեւավորման իր հիմնական ֆունկցիային զուգընթաց այն մեծաթես դայմանավորում է նաեւ բուն հասարակական հարաբերությունների աճաջընթացը: Միայն բազմակարծիք զանգվածային լրատվության առկայությունը բոլոր հիմնախնդիրների մանրամասն ու տարբեր դիտանկյուններից քննարկումներ ծավալելու եւ դրանց զարգացման մշակված ճանադարհ գտնելու, իր հնարավորություններով կարող է երաշխավորել ընդհանրության մեջ հասարակության եւ առանձին-առանձին վերցված նրա բոլոր անդամների ազատ զարգացումը: Ուստիե՞ ամենեին դատահական չէ, որ զանգվածային լրատվության միջոցների ազատության եւ բացախոսության մակարդակը հանդիսանում է որեւէ հասարակության ազատության ասդիճանը որոշելու ամենահիմնական բնութագրիչներից մեկը եւ երաշխիքը: Դեռ ավելին, զանգվածային լրատվության միջոցները համարվում են չորրորդ՝ բարոյական իշխանություն, քանզի կյանքի ցանկացած երեւույթի նկատմամբ մշակելով արժեքային վերաբերմունք, դրանով իսկ դատասիարակում են հասարակությանը, մեծաթես նախանշում նրա զարգացման նախադատվելիությունները եւ ստեղծում իշխանության հիմնական թեւերի գործունեության գնահատման չափանիշներ:

Հայտնի է, որ այն երկրներում, ուր մամուլը ենթակա լինելով գրաքննության՝ միակարծիք է, հասարակության այն մասը, որը չի կիսում տիրադետող դատատնական կարծիքը, կամ ինքնամեկուսացվում է եւ օտարվում հասարակական կյանքին բնականոն մասնակցելուց (ինչը միջազգայնորեն ընդունված հիմնական ազատություններից մեկի՝ մարդու իրավունքների ազատության սահմանափակում է), կամ էլ տիրադետող կարծիքին նրանց անհամաձայնությունը արտահայտվում է գործունեության ոչ ցանկալի եւ երկրի կայունության համար դայթյունավտանգ համարվող մեթոդներով՝ ընդգծված հակադրություն դեսությանը եւ նրա տեսակետներին իր մեծանասնությանը:

Այդ առումով այսօր Հայաստանում ստեղծվել է խիստ մտահոգիչ իրավիճակ՝ ըստ էության բացառությամբ մի քանի լսարանազուրկ թերթերի, ընդդիմադիր մամուլ եւ լրատվություն գոյություն չունի (հեռուստատեսության եւ ռադիոյի մասին խոսելն անգամ հասկանալի դատճառներով անիմաստ է): Ոչինչ չասող թերթերի առատության դայմաններում մամուլը Հայաստանում դադարել է հասարակական գիտակցության ձեւավորման իր հիմնական գործառույթը իրականացնել եւ հետեւաբար այլեւս լուրջ գործոն չէ: Մամուլի նկատմամբ քողարկված ճնշամիջոցների (թղթի, տդարանի դետական մոնոդոլիա) եւ այլն դայմաններում Հայաստանի համար անհնարաւ տդամանակներով մի քանի թերթերի («Ազգ», «Լրագիր օր», «Առավոտ», «Հայաստանի Հանրադետություն», «Գոլոս Արմենիի») հուսահատ գործունեությունն էլ ավելի շատ ընկալվում է որդես ինքնագիայի արդյունք, քան թե գիտակցված անհրաժեշտություն: Չէի ցանկանա բանձրացնել գույները, բայց այսօրվա հայաստանյան մամուլի գործունեությունը կարծես թե հետաքրքրում է գրեթե բացառադես լրագրողական եւ քաղաքական շատ նեղ մի շրջանակի: Այն հասարակայնության համար մատչելի դառնալու եւ եթե ոչ հասարակական կարծիք ձեւավորելու, ադա գոնե լրատվության դարզ շրջադտույտ ադահովելու համար այդ մի ջոցներին անհրաժեշտ կլինի ամենահամեստ հաշվումներով 5-10 անգամ մեծացնել իրենց տդաքանակները:

Մինչդեռ այդդես չէր տրանից ընդամենը մի քանի տարի առաջ, երբ շնորհիվ նաեւ արեւմտյան մամուլի ավանդույթների քաջատեղյակության եւ հայաստանյան դայմաններում նեդնելու հաջող փորձի՝ «Ազգը» եւ նրան ավելի ուշ միացած «Երկիրը» ազդակ դարձան քարացած դաշտնական մամուլի եւ նոր-նոր ձեւավորվող հիմնականում ինքնահրաս եւ բնույթով ավելի շատ այլախոհական, քան թե ընդդիմադիր մամուլի միջոցների գործունեության խթանման եւ այդ կերդ ադահովեցին հայաստանյան լրագրության անանախադեդ աճխուժացում: Ըստ իս, հենց նրանց գոյությամբ եւ առաջադրած դայմաններով էլ կարելի է բացատրել նաեւ մեկ-երկու տարում միանգամից երկու՝ Սնարֆ եւ Նոյյան տադան գործակալությունների կազմավորումը ու հավակնոտ մուտքը լրատվական մրցադաշտ: Մուտք, որը սիդեց իրեն դատած լեթարգիական ճնից արթնանալ նույնիսկ դետական դոտացիաների հաշվին ադրելուն սովորած նախկին Արմենդրես գերուռճացած ադարատով ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսական բաժնի կցորդի վերածված հսկային եւ դատճառ դարձավ գործունեության դաշտի համար օրավուր աճող մրցակցության դայմաններում նրա կողմից աճխատանքի նոր ձեւերի որդեգրման եւ ադարատի մի ավելորդ մասից հրաժարման:

Այդ տարիներին անգամ իր ձեւավորման դայմաններում հայկական մամուլը (ընդհանրության մեջ) կարդանում էր հաջողությամբ իրակա նացնել հասարակությանը նոր արժեքների մատուցման իր էութենական ադաքելությունը: Հենց այս հանգամանքն էր Ամենայն հայոց երջանկա հիշատակ Վազգեն Ա Վեհափառին հիմք տալիս իր առաջին հրադարակային մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել, թե «Ազգ» եւ «Երկիր» օրաթերթերի ամենամեծ ծառայություններից մեկը կարելի է համարել նրանց կողմից նոր հայկական լրագրային լեզվի մշակումը եւ մեր լեզուն դուստերենի լրագրային կաղադարներից ազատագրումը:

Իսկ այդ թերթերը ժամանակին նման խնդիր կարողացել էին իրակա նացնել, քանի որ ունեին մեծ տդաքանակ եւ տարածում: Ավելորդ է կրկնել, որ այդդիսի ներգործություն հասկանալի դատճառներով ինքնամե կուսացված մամուլի այսօրվա մի ջոցների կողմից հնարավոր է միայն տեսականորեն:

Այդ իրավիճակից ելքի միակ բանալին այսօր գտնվում է դետության ձեռքին: Միայն նա կարող է մամուլի ոլորտին առնչվող ծառայությունների ադամենաշնորհացման եւ լրատվության ոլորտի համար նդատակային հարկային մեխանիզմի մշակման միջոցով զանգվածային լրատվության միջոցներին վերադարձնել իրենց գործառույթային (ֆունկցիոնալ) արժեքը: Դետության ձեռքին մամուլը եւ հատկապես ընդդիմադիր մամուլը դետք է մաս կազմեն նրա ինչդես ներքին, այնդես էլ եւ առավել մեծ չափով արտաքին քաղաքականության իրակա նացման գործում:

ՆԱԻԲԻ ԲԱԳՈՒԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փնտրում եմ վարձու բնակարաններ 2-3 սենյականոց՝ բոլոր հարմարություններով եւ 1 սենյականոց՝ առաջին հարկում, քաղաքի կենտրոնում կամ մետրոյի «Բարեկամություն» կայարանի շրջակայքում: Զանգահարել 58-24-83, 56-29-41:

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

Միջազգային

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կկայանա՞ն նախագահական ընտրություններ Ռուսաստանում

Եվ այսպես, այն բանից հետո, երբ Բորիս Ելցինը հայտարարեց երկրորդ ընտրաշրջանում իր թեկնածությունն առաջադրելու մասին, կարծես թե նախագահության թեկնածուների հավանական ցուցակը լրացավ: Ցավոք, ոչ թե շատ նոր, վառ անհատականություն այդպես էլ չհայտնվեց, եւ ռուսաստանցիներին հարկ կլինի նախագահ ընտրել հին խաղաթղթերի կաղակից հայտնի «տուզերի» ու «վալետների» թվից Ելցին, Զյուգանով, Ժիրինովսկի, Լեբեդ, Յավլինսկի, Գորբաչով... Այս «փաղանգին» կարող են միանալ ավելի ոչակաս հայտնի Սվյատոսլավ Ֆեդորովը, Ստանիսլավ Գովորուխինը, ուրիշներ: Չեմ նշում կոմունիստական ու կոմունիստամետ այլ լիդերների Օլեգ Շենինին, Վիկտոր Անոպկովին, անգամ Նիկոլայ Ռիժկովին, որովհետեւ նրանք, թվում է, արդեն վերջնականապես հասածայնության են եկել հանդես գալու իրենց միասնական թեկնածու Գենադի Զյուգանովի ոգեշնչությամբ: Ասենք, առանց դրա էլ ցուցակը բավական մեծ կլինի, եւ այստեղ ընթերցողի ուշադրությունը կուզենայի հրավիրել ոչ միայն իսկապես մեծ խաղաքաղաքականությամբ զբաղվելու ոլորտում գործիչների հավակնությունների վրա, այլեւ... զուտ նյութական շահախնդրության: Բանն այն է, որ նախագահության բոլոր այն թեկնածուները, ովքեր կկարողանան հավաքել եւ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնել օրենքով սահմանված 1 միլիոն ստորագրություն, ոչշտոնապես նախագահության թեկնածու գրանցվելուց անմիջապես հետո պետական բյուջեից կարող են ստանալ 14 միլիարդ ռուբլի նախընտրական արշավ ծավալելու համար: Հանելուկ չկա, Պետդուման հենց այդպիսի օրենք է ընդունել, որով պետությունը ոլորտավորվում է ստանձնել նախագահության թեկնածուների նախընտրական ծախսերը: Մոսկովյան շրջանակներում այժմ բացեիբաց խոսում են, որ 1 միլիոն ստորագրություն հավաքելու համար միանգամայն բավարար կլինի 1,5 միլիարդ ռուբլին: Արդյո՞ք սա մի խայծ չէ, այս կերդ կաղիսալը բազմաղաղակելու հեռանկարով ոգեւորեն ամեն տեսակ շահամոլների, որոնցից նրանք եւս մտնեն նախագահական «շուրջպարի» մեջ:

Այստեղ խաղախական նկատառումներ, ակնհայտորեն, գերազանցել են տնտեսական նոպատակահարմարությունը վերաբերող դատողություններին: Բանն այն է, որ թեկնածուների մեծ խմբակը չսովորացնց ձեռնտ է նախագահության հիմնական թեկնածուներին: Ինչո՞ւ: Որովհետեւ նրանցից ոչ մեկը հույս չի կարող ունենալ, թե միանգամից, առաջին իսկ փուլում, նախագահ կընտրվի: Հետեւաբար, եզրափակիչի հույս ունեցող եւ երկրորդ փուլ անցնելու լուրջ մտադրությամբ ոգեւորվող ելնող ուժերը, այլ խաղեր: Մոսկովյան մամուլը լի է այդպիսի «խաղերի» տարբերակների քննությամբ: Դրանց չանդրադառնանք, եւ ոչ միայն այն ոլորտով, որ դեռ բավական վաղ է, այլեւ այն, որ, սրափ դատելու դեպքում, խիստ հարցականի տակ են հենց բուն նախագահական ընտրությունները: Ռուսական խաղախական դիտորդների շրջանում միանգամայն լուրջ տագնապ է հայտնվում, որ նախագահական ընտրությունները... չեն կայանա: Մամուլում ու հեռուստատեսությամբ ողղակի նշվում է, որ շատ հավանական է երկում «արտակարգ դրություն» հայտարարելու միջոցով դրանք խոչընդոտելու վտանգը, որովհետեւ «արտակարգ դրության» ռեժիմը բացառում է ոչ միայն որեւէ ընտրության, այլեւ խաղախական կուսակցությունների գործունեության հնարավորությունը: Մատնանշվում է, որ ներկայիս իշխանությունները կարող են գնալ դրան, եթե բացարձակապես համոզված լինեն, որ տվյալ դեպքում միանգամայն ոչ ցանկալի հետեւանքներ չեն հետեւի: Ամենայն դեպքում, ինչպես հայտնի է, կայացան, չնայած ակնհայտ էր, որ այնտեղ մեծամասնություն են կազմելու «ձախ» ուժերը: Սակայն ա՛յլ բան են դիմայական, եւ միանգամայն այլ՝ նախագահական ընտրություններ: Երբ ընթերցողը չի մոռացել, դեռ այն ժամանակ, կանխատեսելով «ձախերի» հաղթանակը, տղերիս հեղինակը «Ազգի» էջերում գրում էր, որ դա ռուսական հասարակական-քաղաքական կյանքում չի բերի որեւէ էական տեղաշարժի, նույնիսկ՝ Չեռնոմիրդինի կառավարության անկման: Հակառակ մեր մամուլում իմ որոշ ընդդիմախոսների ոչ-անվանական առարկությունների՝ այս կանխատեսումը լիովին իրականացավ: Բայց այն ժամանակ ես գրում էի նաեւ ա՛յլ բան՝ հիմնական խոչընդոտները կծավալվեն նախագահական ընտրությունների ընթացքում, փոփոխություններ կլինեն միայն դրանց առաջադրումներ հայտնի դառնալուց հետո: Այժմ էլ մնում եմ այդ դիրքորոշման: Փոփոխություններ կլինեն, եթե միայն... ընտրությունները կայանան...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԱՆԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Երջանիկ մանկություն ու աղահով ծերություն»

Բոլորս էլ լսել ենք Ռոյթեր, Ֆրանսիայի, Փաս, Ինտերֆաքս, ԻՏԱՌ-ՏԱՍՍ եւ ուրիշ լրատվական գործակալությունների մասին: Սակայն մի լրատվական գործակալություն կա, որի մասին էլեկտրոնը գիտեն, որին, սակայն, արտասահմանյան երկրներում հատուկ վստահությամբ ու ճիշտությամբ են վերաբերվում: Խոսքը «Children Express» ամերիկյան մանկական լրատվական գործակալության մասին է, որի 5 բյուրոներում (լրջոր Ամերիկայի տարբեր ծայրերում եւ մեկը Լոնդոնում) 350 երեխա է աշխատում: Բյուրոների մուտքերի մոտ կախված ցուցատախտակներին պատանի թղթակիցների եւ խմբագիրների լուսանկարներն են փակցված: Կարմիր մայկաներ հագած, մագնիսոֆոններով ու հարցաթերթիկներով զինված ու վճռականությամբ լցված պատանի թղթակիցներն ամեն օր նյութեր փնտրելու են գնում: Թղթակիցները հերթափոխերով են աշխատում, եւ նրանց ֆարբեր հարցեր են հուզում: Որոշ երեխաներ «Children Express»-ի թղթակիցներ են դարձել, որովհետեւ երեխաների հայացքներն արտահայտեն, նրանց հուզող «սուր» հարցերի ճնարկման առարկա դարձնեն: Մյուսներն ավելի հիշ հավակնություններ ունեն, նրանք վստահ չեն, թե իրենք կարող են նման հարցերով զբաղվել եւ ավելի համեստ նոպատակներ են հետապնդում: «Children Express»-ը լայնորեն լուսաբանել է 92 թվականի ամերիկյան նախագահական ընտրություններն ու նույնը պատրաստվում է անել այս տարվա ընտրություններին: Մանկական լրատվական գործակալության նյու Յորքի բյուրոյի տնօրեն Քրիս Հանքրը միակ մեծահասակն է այնտեղ, ու BBC-ի թղթակցի այն հարցին, թե «Children Express»-ը ինչպես է ընտրում երեխաներին, պատասխանել է, թե ընտրության չափանիշներ չկան, չի պահանջվում, որ նրանք գրողներ կամ էլ գեղագանցիկներ լինեն: Միակ բանը, որ պահանջվում է՝ հետաքրքրասեր լինելն ու սեփական կարծիք ունենալն է: Իսկ երեխաներն այդ երկու պայմանին էլ բավարարում են, բացատրել է Հանքրը: Ինչ վերաբերում է պատասխանությունների տարիքային բաժանմանը, ապա Հանքրի խոսքերով, ամեն ինչ շատ պարզ է. «8-12 տարեկան հասակում նրանք որպես թղթակիցներ են աշխատում, 14-18 ում՝ խմբագիրներ, եւ հենց որ պատանին կամ աղջիկը 19 տարեկան է դառնում, մենք հրաժեշտի ժամանակ նրան ասկե ժամացույց ենք նվիրում, ու նա «թոշակի է անցնում», իսկ ինքը ընդունվում:

Նախանձել կարելի է միայն: Մեզ մոտ ոչ բոլոր թղթակիցներն են, որ խմբագրություններից մագնիսոֆոններ են ստացել: Ես, օրինակ, դեռ չունեմ: Իսկ ինչ վերաբերում է թոշակի ուղարկելու հրաժեշտի արարողությանը, ապա 50 տարվա աշխատանքային ստաժ ունեցող վաստակաշատ լրագրողներն էլ ունկ ժամացույցներ չեն ստանում: Իմ 8 տարեկան դստրիկը, որն ինձնից ժամացույց է առնել պահանջում, «Children Express» ընդունվելու ցանկություն է հայտնել:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՊՅԱՆ

ՏԵՍԱՔՐԴՐԱԿԱՆ

Աֆրիկացի կախարդը Լոնդոնում փնտրում է խաղաղաբեր գլուխը

Ուրբաթ օրվա լոնդոնյան լրագրերը մանրամասնորեն նկարագրում են հարավաֆրիկյան կախարդ-գեղատեսի այցը Լոնդոն: «Ինդեպենդենթ» թերթը գեղատես Գկալեկայի լուսանկարն էլ էր տպագրել: Կախարդը յուրահատուկ տեսք է ունեցել: Նա ընձենիով եւ կարճ երշագգեստով է եղել, բոլոր ոտքերին սանդալներ, գլխին բազմաթիվ հյուսիկներ: Գկալեկան Մեծ Բրիտանիա է ժամանել, որպեսզի գտնի իր նախահոր բազավոր Հինգսիի գլուխը: Բրիտանական օկուպացիոն զորքերի հրամանատարի հրամանով 1853 թվականի մայիսին բազավորը գլխատվել էր: Ցեղատես Գկալեկայի կարծիքով Հարավաֆրիկյան Հանրապետության բոլոր դժբախտությունները այն բանից են առաջացել, որ բազավորի գլուխը չի կարողանում մարմնին միանալ: Կախարդը որոշել է գտնել բազավորի գլուխը: Հինգշաբթի օրը Լոնդոնի «Հիլտոն» օդանավակայան հասնելուն պես Գկալեկան տեղում պարել է իր հայրենի բարբառով մանր առալիա՝ անցկացրել, որի ընթացքում պարզվել է, որ գեղատեսը իր նախահոր գլուխը հայտնաբերելու համար մտադիր է այցելել Անգլիայի բոլոր թանգարաններ: Նրա խոսքերով բազավոր Հինգսիի գլուխը գտնելուն պես Հարավային Աֆրիկայում հավիտենական խաղաղություն կհաստատվի: Ցեղատեսի այցի ծախսերը՝ աֆրիկյան 2 զարեջրի գործարաններ են հոգում:

Գ. Է.-Տ.

«Թուրանիամոն» զարեջուրը միայն փորձագետների համար է

Անգլիացի երեք գիտնականներ երկրի զարեջրագործական խոշորագույն ընկերությանը հանձնեցին զարեջուր արտադրել ըստ հին եգիպտական բաղադրատոմսի: Այդ հանձնարարությունը առաջ եկավ այն բանից հետո, երբ 4 տարի առաջ Եգիպտոսում Նեֆերտիթի տաճարում կատարած պեղումների ժամանակ հայտնաբերվեց զարեջրագործարան, որտեղ կային 3500 տարի առաջ պատրաստված խմիչքի նստվածք պարունակող սափորներ: Դա բույլ տվեց պարզել հին եգիպտական զարեջրագործության գաղտնիքները: Նոր զարեջուրն արդեն ստացել է «Թուրանիամոն» անվանումը, բայց հուժը կբավականացնի միայն 1000 հոգի համար, ուստի հին եգիպտական զարեջուրը կկարողանան համտեսել միայն առավել հանձնարարված փորձագետները:

ՈՍՅԵՐԸ «ԻԶՎԵՍՏԻԱ»-ՈՒՄ

ՎԻՃԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Սուդետների հարցը թունավորում է չեխ-գերմանական հարաբերությունները

Արդեն մի քանի ամիս է, ինչ Գերմանիայի եւ Չեխիայի հարաբերություններում լարվածություն է ծագել այսպես կոչված Սուդետյան մարզի պատճառով: Սուդետներ անունը կրող մոտ 300 կիլոմետրանոց լեռնաշղթան ձգվում է Չեխիայի արեւմուտքից մինչեւ Լեհաստան եւ Գերմանիա: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ Կենտրոնական Եվրոպայում կազմավորվեցին ազգային պետություններ, Բոհեմիայի գերմանացի փոքրամասնությունն իր բնակության տարածքով միացվեց Չեխոսլովակիային: Բայց այդ գերմանացիները բնավ չմերվեցին չեխական պետությանը: Սուդետյան մարզ անվանումն ստացած այդ տարածքը պատրվակ ծառայեց, որպեսզի 1938 թ. Մյունխենի համաձայնագրով Չեխոսլովակիան մասնատվի եւ գերմանական տանկերը շարժվեն դեպի Պրահա: Երկրորդ աշխարհամարտից հետո Սուդետյան մարզից 2,5-3 միլիոն գերմանացիներ անմարդկային հալածանքներ ստացան Չեխոսլովակիայում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո սուդետյան գերմանացիների հզոր ընկերակցությունները սրությամբ առաջ քաշեցին «Սուդետյան հարցը», ըստ որում չափավորակները պահանջում են իրենց կորցրած ունեցվածքի ֆինանսական փոխհատուցում, մինչդեռ շատերը ձգտում են Չեխիայում վերականգնել իրենց սեփականատիրական իրավունքները: Ինչպես տեղեկացնում է Nouvel Observateur հանդեսը, կանցլեր Հելմուտ Քոլի պահպանողական դաշնակիցը՝ Բավարիայի քրիստոնեա-սոցիալական միությունը առիթը բաց չի թողնում (անշուշտ, նախընտրական

նոպատակներով) սուդետյան գերմանացիներին: Սակայն դեռ Գերմանիայի դաշնակցային կառավարությունն առավել զգուշավոր է իր հայտարարություններում: «Մենք որոշակիորեն ասում ենք, որ ֆինանսական եւ առավել եւս տարածքային որեւէ փոխհատուցում չենք պահանջում սուդետյան գերմանացիներին սեփական կանգարկման դիմաց», ընդգծում է գերմանացի քաղաքական դեկավարներից մեկը: Բայց միաժամանակ Գերմանիայի կառավարիչներն անուղղակիորեն ճնշում են գործադրում Չեխիայի վրա, հասկացնելով, որ Գերմանիան հասուցում կտա նացիզմի զոհերին (մինչեւ օրս դա չի արվել միայն Չեխիայում), եթե չեխերը խոստովանեն սուդետյան գերմանացիների արտաքսման անմարդկային պայմանները եւ որեւէ ծեւով ներողություն խնդրեն:

Չեխիայի նախագահ Վացլավ Հավելը մի առիթով արդեն դատապարտել է սուդետյան գերմանացիների արտաքսման հետ կապված ծայրահեղությունները, միաժամանակ ընդգծելով, որ տեղահանությունը որոշված է եղել Պոտսդամի խորհրդաժողովում եւ որ դրա հետեւանքների վերանայման հարց չի դրվում: Նա հատենայն դեպս հիշեցրել է, որ գերմանացիներն չին սանձազերծել պատերազմը: Այնպես որ Չեխիայի կառավարությունը չի շտապում ներողություն խնդրել գերմանացիներից: 1995 թ. մայիսի վերջերին Չեխիայում անցկացված հարցային հարցման տվյալների համաձայն, երկրի բնակիչների 68 տոկոսն այն կարծիքին է, թե սուդետյան գերմանացիների արտաքսումը եղել է «...ռինական վիժություն»:

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Մարտի 22-ին Նանսի Դորեյի բանգարանում կբացվի «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» անունը կրող ցուցահանդեսը: Այսօր այն ավարտական փուլում է, տղագրվում է նաեւ ցուցահանդեսի դասկերազիրքը, որը մնայուն արժեք է լինելու: Այս էր երեկ մշակույթի ճախարարությունում հրավիրված ասուլիսի առիթը: Ցուցահանդեսի կոմիսարն է ՀՀ մշակույթի առաջին փոխնախարար Անելկա Գրիգորյանը: «Վերջին 2-3 տարում մեր մշակույթը ներկայացվում է արտասահմանում նոր հայացքով: Փորձեցինք շարունակել մի ավանդույթ, որ կար 18-19-րդ դարերում եւ որը անցյալ տարի իրականություն դարձավ Բոխումի ցուցահանդեսով: Հայ արվեստն արեւելյան արվեստների մեջ ներկայանում է իբրեւ առանձին ճյուղ, իբրեւ համամարդկային մշակույթի կրող տեղական լուծումներով, նվաճումներով, ասաց մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը: Ցուցահանդեսը հնագիտական նյութի վրա ցույց է տվող այն հոգեւոր լանջափեթը, որ միայն այս տարածքում կարող էր գոյանալ,- բնութագրեց որդն Մովսեսը:

Կներկայացվի 400 ցուցանմուշ հավաքված Հայաստանի դասմության պետական բանգարանից, Սարդարապատի, Երեբունիի, Գյումրիի երկրագիտական բանգարաններից: Առաջնագրության արժեքը մոտ 14 միլիոն ռուբ. դոլար է կազմում. աղաջնվագրական գործարքը կատարվել է Լոնդոնի Լլոյդս նշանավոր գործակալության Ֆրանսիայում գործող մասնաճյուղի կողմից: Յուրահատկությունն նմուշ ունի անձնագիր: Նանսի բանգարանի տնօրեն որն. Ժակ Սանտրոն տեղեկացրեց, թե Ֆրանսիայում գործող բանգարանային օրենքը շատ խիստ է եւ հնարավորություն է բնձեռում ներկայությունն այսօրվա արժեքներով», ասաց որն. Սանտրոն: Մշակույթի առաջին փոխնախարար Անելկա Գրիգորյանն անդրադառնալով դասկերազրքին, կարեւորեց, որ սա գիտական մտքի այսօր ստեղծված փակուղուց նաեւ ելք է. «20 հայ հեղինակ (հիմնականում հնագիտության ինստիտուտի աշխատակիցներ Արամ Քալանթարյան, Ժորեսս Խաչատրյան, Հակոբ Սիմոնյան, Բենիկ Երիցյան, Բորիս Գասպարյան եւ այլք) տղագրվում են միջազգային վարկ ունեցող հեղինակների կողքին վիճահարույց շատ խնդիրներ առաջադրելով ընթերցողին»:

Ի դեղ, գիտական նյութը նայվել է գիտական միջազգային կոմիտեում, որի նախագահ Պոլ Բեռնարը 96-ին ֆրանսիական համալսարանական մակարդակով ներկայացնելու է մինչֆրիստոնեական Հայաստանը: «Երբ ցուցահանդեսում ֆրիստոնեությունն առաջնային նոյասակ չէ. առյս վերջնական է: Կներկայացվի Հայաստանի ֆրիստոնեացման ուղին եւ ցայտուն կդառնա, որ առաջինն է որդես դեսական կրոն այն ընդունել», լրացրեց որն. Սանտրոն:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Լուսոր Ասլանյան գլխավոր խորհրդի ջանքերով. Հայաստանի կառավարության, Ֆրանսիայում Հայաստանի եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատների ջանքերով: Ցուցահանդեսը կտեւի մինչեւ սեպտեմբերի 15-ը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար»

Նոր ներկայություն աշխարհին՝ Նանսում

ԵՐԵՎԱՆ

Մեկ ժամ Մոցարտի հետ

«Հայաստան Ավստրիա» ընկերության նախագահ Ալբերտ Բաղդասարյանը հայտարարեց, որ երաժշտական միջոցառումը նվիրված է ավստրիացի երգահան Վոլֆգանգ Մոցարտի ծննդյան 240 ամյակին, հետո ավելացրեց, որ դա մեկժամյա հանդիսում է կոմպոզիտորի հետ: Այնուհետ երաժշտագետ Զարա Խաչատրյանը հակիրճ դասմեց «Առեւանգում հարեմից», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուան», «Կախարդական սրինգ» եւ այլ օպերաների, սիմֆոնիաների, կամերային, հոգեւոր եւ այլ երաժշտական ստեղծագործությունների հեղինակի կյանքի ու գործունեության, նրա բողած ժառանգության մասին:

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերության դահիճում երեկ կազմակերպված միջոցառմանը մասնակցում էին Կոմիտաս կոնսերվատորիայի դասախոսներ, ուսանողներ, վոկալ եւ գործիքային կատարողներ, «Տաղարան» խմբի մենեգիչներ, երաժշտական ուրիշ հասատությունների շնորհալի սովորողներ:

Ց. Ս.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Հայերը աջափնեայ Չերեմոշում»

Կրակովի «Հայ մշակութային ընկերությունը» լույս է ընծայել լեհահայ Վարդանուիչների գերդաստանից սերած Աննա Դանիլեվիչի «Հայերը աջափնեայ Չերեմոշում» գրքույկը (Anna Danilewicz, Ormianie z prawego brzegu Czeremoszu, Kraków, 1994 թ.): Յուրաքանչյուր դասմությունը, սովորությունները, բանահիւսությունները, ճաշատեսակները, գիշերային տների նկարագրությունը, զանազան տոներին երգած ու արտասանած լեհերեն ոտանավորները, տեղեկություններ այդ կողմերի հայտնիների ծեռագործի, բնակավայրերի հայ բնակչության հանակի մասին եւ այլն:

Գրքում զետեղված են նաեւ դասական լուսանկարներ (որ Բանիլովի այժմ գոյությունն չունեցող հայոց եկեղեցին), լեհահայերի ծեռագործների նախշեր, այդ կողմերի հայկական տների հատակագիծ եւ այլն:

Գրքույկի խմբագիրներն են Կրակովի Եագիելլոնեան համալսարանի դասախոս Աննա Քժիշտոֆովիչը, Կրակովում գործող «Հայկական մշակութային ընկերության» նախագահ, մորական կողմից լեհահայ նշանավոր Բոհոսեիչ գերդաստանի շառավիղ Ադամ Տերեզկին եւ նրա տեղակալ, դարձեալ լեհահայ Անտոնի Ամիրովիչը, որ նաեւ յիշեալ ընկերության տղագիր մասնին «Բիլեյեն» դարբերականի խմբագիրն է:

Նկատի ունենալով, որ լեհահայերի ազգագրության վերաբերեալ կենդանի աղբիւրներ այժմ դժուար թե դահդանված լինեն, որի դասճառով վերջին տասնամեակում այդ բնագրով նոր աղբիւրներ չեն հրատարակվել, գրքույկը արժեքաոր է լեհահայերի ազգագրության նուրբերը ի մի բերելու տեսակետից:

Ռ. Հ.

Մակինին ֆրանսիական անձնագի՞ր

Անդրեյ Մակինը, որ ծաղել է Ֆրանսիայի նախագահի հետ, առաջիկայում դեսք է ստանա ֆրանսիական քաղաքացիություն: Նրա՝ «Ֆրանսիական կտակարանը» վեդը (Սերկյուր դը Ֆրանս), որն արժանացել է Գոնկուր մրցանակին, իր 485 հազար վաճառված օրինակներով, դասվում է երկրորդ տեղում, այն բացարձակ ռեկորդից հետո, որ միշտ դասկանում է Մարգրիտ Դյուրասի «Սիրեկանին» (վաճառվել է 1 մլն օրինակից ավելի): Վեդը բարգմանելու հայտերի առնչությամբ կնքվել է 15 դայմանագիր, մասնավորապես՝ Մակեդոնիայի, Ճապոնիայի, Ֆինլանդիայի եւ Կորեայի հետ:

ԱՍՆ 1996-Ի ՆՈՐ ԱՍՏՂԵՐԸ

Ջունո Դիազ՝ խոսքունակից վիդասան

Կարճ դասվածքների հատորյակի եւ դեռ անավարտ առաջին վեդի համար Ջունո Դիազի ստացած վեց բվանիշ հոնորարանիշավճարը նման էր վիճակախաղի տոմսի խոշոր շահումի: 27 տարեկան այս խոսքունակից վիդասանը վերջին շրջանի գրական աշխարհի ամենացնդող նորությներից է: Այդ դասվին արժանացել է ոչ թե բախտի բերմամբ, այլ շնորհիվ իր տաղանդի: 11 կարճ դասվածքների հատորյակն այս տարվա աշնանը հրատարակվելու է Ռիվերհեդ Բուքս հրատարակչության կողմից «Տղաների խաղաթը» վերնագրով: Այնտեղ հեղինակը դասմում է իր անցած դժվարին դասանեկության մասին Դոմինիկյան Հանրադետությունում եւ արդա Նյու Յորքում, որտեղ իր խոսքերով «մեր հանդյնքը մեկուսացված էր մյուս բոլոր հանդյնքներից»: «Դիազը լրագրողի տեսողություն ունի եւ բանաստեղծի լեզու» գրում է «Նյուզուիքի» գրաքննադատն ավելացնելով, որ նրա հանրաս դնդումները թե կնախընտրեր գրական աշխարհ մուտք գործել անաղարտ, դարգարդես անմնաս՝ ենի որ իսկական տաղանդը միշտ էլ դոռկրոտվում է երեսն գալիս:



ՀԱՄԱՌՈՏ

Հրաչյա Աճառյանի անունը կրկին տեղ գտավ ցուցատախտակին

«Ազգի» փետրվարի 7-ի համարում համանման վերնագրով մեր տեղեկատվությունը ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի նոր ցուցատախտակից Հրաչյա Աճառյանի անունը դուրս մղելուն էր վերաբերում: Ուրախությամբ հայտնում ենք, որ ինստիտուտի ղեկավարությունը կատարել է տված խոստումը՝ ցուցատախտակին վերականգնելով մեծ գիտնականի անունը: Ավելացնենք նաեւ, որ Չարենցի անվան գրականության եւ արվեստի բանգարանը դատրաստվում է մարտի 8-ին հանդիսավոր նշել Հրաչյա Աճառյանի 120 ամյա հոբելյանը:

Օրենբուրգ կմեկնեն Ռուբեն Մաթեւոսյանի եւ Նադեժդա Սարգսյանի խմբերը

Երեկվա մեր թերթում տղագրել էինք «Այսօր-32»-ի մեզ տրամադրած լուրը՝ Օրենբուրգում մարտի 22-24-ը անցկացվելիք հայկական մշակութային օրերի մասին: Հեռախոսի անբավարար աշխատանքի դատճառով չկարողացանք լուրը նույն օրը ճշտել մշակույթի վարչությունում: Երեկ մեզ դատասխանեցին, որ նախատես կազմված մեծաքանակ խմբից Օրենբուրգ կմեկնի 32 հոգի: Ոչ Սոֆի Դեւոյանի, ոչ Արքուր Գրիգորյանի բատրոնները Ռոբերտ Ամիրխանյանի գլխավորած դատվիրակության մաս չեն կազմի: Կմեկնեն Ռուբեն Մաթեւոսյանի «Աստղեր» եւ Նադեժդա Սարգսյանի «Հայեր» խմբերը:

Սլովակիայի ֆիլհարմոնիկի ելույթները կղեկավարի Լորիս Ճգնավորյանը

Հայաստանի ֆիլհարմոնիկի ղեկավար մաեստրո Լորիս Ճգնավորյանը մեկնել է Սլովակիա՝ տեղի ֆիլհարմոնիկի հետ փորձերի: Արամ Խաչատրյան կենտրոնից տեղեկացանք, որ փետրվարի վերջին-մարտի սկզբին Սլովակիայի ֆիլհարմոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ հանդես կգա Գերմանիայում եւ Իտալիայում:

Ֆեոնե քաղաքում վաճառվում է Վոլտերի դդյակը

Վաճառքի է հանվել ֆրանսիական Ֆեոնե քաղաքում գտնվող 18-րդ դարի այն դդյակը, որտեղ ապրել էր մեծ փիլիսոփա լուսավորիչ Վոլտերը: Այդ վեհը կայացրել են դդյակի ներկայիս տերերը, որոնց նախնիներն այդ կալվածքը ձեռք էին բերել 1847 թ: Ներկայումս դատմական հուշարձան համարվող դդյակը Վոլտերը գնել էր 1759-ին 89 հազար լիվրով: Շենքի ներկա արժեքը գնահատվում է մոտ 30 միլիոնով: Առայժմ հայտնի չէ, թե ով այդքիսի գումար կվճարի այդ տեսքում բնակություն հաստատելու համար, որտեղ ամեն ինչ հիշեցնում է մեծ փիլիսոփային:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Վալմարի ցուցահանդեսը Փարիզում

23 նոր գործ՝ «Երաժշտություն», «Պայքար», «Իրավիճակ» շարքերից

Հունվարի 22-29 Փարիզի կենտրոնում, Լուվրի դիմաց գտնվող Գալերի Էտիեն դը Կոզանում բացվել է Վալմարի գեղանկարչական ցուցահանդեսը: Երկրորդ անգամ ցուցադրվելով Ֆրանսիայի մայրաքաղաքում նկարիչն արվեստասերների ուշադրությանն է ներկայացրել 23 գործ «Երաժշտություն», «Պայքար» եւ «Իրավիճակ» շարքերից: Վալմարի ասելով, ցուցահանդեսում ներկայացված բոլոր գործերն էլ վրձնված են 1995-ին: «Այն հարցումին, թե Վալմարի արուեստը ինչո՞վ համոզած է զինք, դատասխանի տնօրեն Էտիեն դը Կոզան կը դատասխանէ. «Այս գործերը ակներեւ են իրօրինակ ներդաշնակությամբ եւ անոնք նկարիչին իր հայրենի արուեստին հարազատ արտացոլումն են», գրում է Փարիզում լույս տեսնող «Կամֆ» օրաթերթը հունվարի 26-ի համարում: Այնուհետ թերթը ներկայացնում է նաեւ նկարչի խոսքը. Վալմարն ասում է, թե չնայած նյութական դժվարություններին, հայ արվեստագետները ստեղծագործում են, աշխատում ցուցադրվել արտասահմանում, որով ճշտում են իրենց ասելիքը, ուրիշ ազգերի կողմից ընկալումը:

Այնուհետ՝ Հայաստանի դեսպանատան՝ անցյալ տարի բացված շենքում հունվարի 31-ին հայաստանցի 4 նկարիչներ (Ալեքսանդր Գրիգորյան, Ռոբերտ Էլիբեկյան, Հովհաննես Հարությունյան եւ Վալմար) հանդես են եկել միացյալ մի ցուցահանդեսով: Դեսպանատան նոր շենքում բացված առաջին ցուցահանդեսն, որ Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիտչյանի, նոդատակ ունի ծանոթացնել եւ ծանոթացնել Հայաստանի արվեստագետներին:

Վալմար. «Պայքար» շարքից. 1989 թ.

digitised by A.R.A.R.@

ԽՆԴԻՐՆԵՐ

Հեռուստատեսային մի անհաջող «ֆուտբոլ-շոու» հաղորդման մասին

Պատերազմ դաժան ճշմարտության դեմ

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղարի անպատասխանատու հայտարարությունները

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Տավոլ, մեզանում ճշմարտացի ինքնադատությունը միշտ էլ «սերով» է ընդունվում: Ստիպված եմ անկեղծորեն «կիսվել» ընթերցողների եւ հատկապես ֆուտբոլասերների հետ: Հայաստանի հավաքականը վերադառնալով արտասահմանյան շրջագայությունից, սառը պատերազմ սկսվեց տողերիս հեղինակի դեմ՝ կազմված ուղեւորությանը վերաբերող «Ազգի» հրապարակումներին: Գլխավոր մեղադրանքն այն է, թե Մարոկկոյի հավաքականից 0-6 հաշվով կրած պարտությունը ինչո՞ւ է խայտառակություն գնահատվել: Մենք գրեթե 4 ժամ խոսակցություն ունեցանք 33 ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմենակ Սարգսյանի հետ: Նա ինքը մամուլի ասուլիսում ընդգծեց, որ ինքնադատությունը՝ կազմված մամուլի ծառայության եւ ինֆորմացիայի բաղակայության հետ, միանգամայն տեղին էր, իսկ խոշոր հաշվով պարտությունն էլ անծանր զայրացրել էր իրեն եւ ինքը հանդիսարանում լուրջ խոսակցություն էր ունեցել ֆուտբոլիստների հետ: Անցած կիրակի երեր տրված «Բոկա Խունիորս»-Հայաստան հանդիպման հեռուստաթեղորտաժը նորաբուխ երեք «մեկնաբանների» կատարմամբ արտավ էր դաժան ճշմարտության դեմ: Հորինված մեղադրանք էր ներկայացվում, թե իբր տողերիս հեղինակին չեն տարել արտասահման եւ այդ պատճառով իրենից նյութեր է հորինել ու տպագրել: Ի դեպ, բոլոր հոդվածները տպագրվել են արտասահմանյան մեր թղթակիցների նյութերով, որոնց պատճենները կան: Ինքը՝ Արմենակ Սարգսյանը հաստատել է այն փաստը, որ տողերիս հեղինակի կողմից արտասահման գնալու մասին առաջարկ, ուստի եւ մեղքում չի եղել:

«Մեկնաբաններից» մեկը, խղճի խայթ չզգալով, հայտարարեց, թե իբր Սուրեն Բաղդասարյանին մեկ անգամ Բելգիա են տարել, եւ ինքը ստիպված գովաբանել է հավաքականին, իսկ դրանից հետո ոչ մի տեղ չեն տարել, եւ զայրացել է: Նախ այն, որ որեւէ մեկը ինձ Բելգիա չի տարել, այլ խմբագրության կողմից եմ գործուղվել: Արդյո՞ք է ռեպորտաժ հաղորդել նաեւ Մակեդոնիայից, եղել Կիպրոսում: Ֆուտբոլի հայկական պատմության ընթացքում առաջին անգամ ֆեդերացիան մեծ ժեստ արեց մեր մարզական լրագրողների հանդեպ, նրանց ընդգրկելով Մակեդոնիա մեկնող պատվիրակության կազմում, որի արդյունքը եղավ այն, որ մեր լրատվության բոլոր միջոցներում լայնորեն լուսաբանվեց հավաքականի առաջին հաղթանակը:

Արմենակ Սարգսյանի հետ մենք եկանք համաձայնության, որ ազնվորեն համագործակցենք հանուն մեր ֆուտբոլի առաջընթացի, առանց բարցնելու որեւէ սվերոս կողմ: Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պավել Խաչատրյանը եթերից հայտարարեց, թե իբր «Հավաքականի խայտառակ պարտությունը» վերնագրով հոդվածը հոգեբանորեն բացասական ազդեցություն է ունեցել տղաների վրա: Նախ, զարմանալին այն է, թե այդ ինչպես եղավ, որ որեւէ կաղ չլինելով, որեւէ արտասահմանում տեղեկացել են, թե իրենց մասին ինչ է հրապարակվել Հայաստանում: Ինչպես ի մացանք, հոդվածը ֆաքսով ուղարկվել էր հավաքականի ղեկավարներին, բազմացվել էր ու բաժանվել տղաներին: Եզրակացությունը պարզ է. ընդհակառակը՝ հոդվածն օգտագործվել է հոգեբանորեն տղաների վրա դրական ազդելու, ֆուտբոլիստների ինքնասիրությունը շարժելու, ընդգծելու «բասիքի բացակայությունը», ասելով՝ տեսեք ձեր մասին ինչպիսի աղմուկ է բարձրացել Հայաստանում:

Ինքը՝ գլխավոր քարտուղարը, բազմիցս հանդես է եկել անպատասխանատու հայտարարություններով, արտասահման մեկնելուց առաջ տարբեր թերթերի տարբեր տեղեկություններ է տվել: Այսպես, նույն օրը, հունվարի 16-ին «Լրագիր» թերթում գրված էր, թե իբր Հայաստանի հավաքականը մրցելու է Մարոկկոյի, Բելգիայի, Բրազիլիայի, Արգենտինայի եւ Ուրուգվայի ընտրանիների, «Լրագիր օրում»՝ Բելգիայի, Մարոկկոյի հավաքականների, Մարսելի «Օլիմպիկի» հետ, իսկ Արգենտինայում մասնակցելու է տեղի բարձրագույն խմբի չորս թիմերի հետ մրցաշարին: Նույն «Լրագիր օր»-ում, ըստ Պավել Խաչատրյանի գրում էր, թե Բրազիլիայում հավաքականին կմիանան տեղի հայազգի ֆուտբոլիստներ Ալեն Պողոսյանը, Մարլեն Կիրեմիջյանը, Էրիկ Սասատրյանը եւ Միշել Տեր Զաքարյանը: Այս աթիվ գլխավոր քարտուղարը մեկ տարի է, ինչ հայտարարություններ է անում: Արմենակ Սարգսյանն անդրադառնալով ֆրանսահայ ֆուտբոլիստներին, ընդգծեց թիմերի հետ խնդիրները, խաղացողների առաջարկության եւ հաղթաթղթության բարդ հարցերը: Պավել Խաչատրյանը տարածեց նաեւ Միշել Հիդալգոյի՝ Հայաստանի հավաքականում աշխատելու մասին չհիմնավորված լուրը: Իր իսկ հիմնադիր, նախագահ եւ թիմի գլխավոր մարզիչ Մանվել Հայրապետյանին: Անմիջապես հասկացա, որ նա, պատկերավոր ասած, ֆուտբոլային ֆանատ է: «Ազգն» արդեն գրել է, որ այս երիտասարդն ու նախկին ֆուտբոլիստը Սանկտ Պետերբուրգում տարիներ առաջ մանկապատանեկան ակումբ է ստեղծել, որն արդեն մեծ հաջողությունների է հասել: Նա նույն ձեւով ուզում է ծառայել նաեւ իր հարազատ Այուդիին: Այդպիսի երանդում ու նվիրված մարդկանց շնորհիվ է հնարավոր ոտի կանգնեցնել հայկական ֆուտբոլը:

Այն հարցին, թե մեծ ֆուտբոլի խաղարարությունը զգացած եւ լավ պայմաններին սովոր անվանի ֆուտբոլիստներն արդյոք չե՞ն հիասթափվի երկար ու անհաջող ճանապարհներից եւ կենցաղային ոչ լավ պայմաններից, Մանվել Հայրապետյանն ասաց. «Մենք նրանց կառաջարկենք հյուրանոց կամ բնակարան եւ իրենք ընտրություն կկատարեն: Բացի այդ, մենք հին ծանոթներ ենք եւ իրենք Հայաստան են եկել ոչ թե փափուկ պայմաններում մնալու կամ միայն ֆինանսների համար, այլեւ օգնելու մեր ֆուտբոլին: Մենք հեռանկարին ենք նայում եւ երկու-երեք տարի հետո լավ թիմ պետք է ունենանք, եւ ոչ միայն հանդես գանք բարձրագույն խմբում, այլեւ եվրոպական մրցաշարին մասնակցելու իրավունք ձեռք բերենք: Առանց լուրջ նոպատակների հաջողություն չի լինի: Մենք մանկապատանեկան ֆուտբոլի մեծ վտրտ ունենք եւ «Կադան-81-ը» շատ բանով կընդօրինակի «Սանկտ Պետերբուրգին»:

«Զանգեզուրի» հետ խաղում «Կադան-81-ը» հանդես եկավ այսպիսի կազմով.

Արմենակ Ստեփանյան, Ավետիք Սարգսյան, Վլադիմիր Դոլգորուկով, Գուրգեն Խաչատրյան, Արթուր Վարդանյան, Սասուր Միսիրարյան, Արթուր Շահնազարյան, Յուրի Ժելուդկով, Ալեն Սուվսիսյան, Արթուր Ղազարյան, Ալեքսանդր Կուզնեցով: Եղավ նաեւ 6 փոփոխություն:

Վնասվածքի պատճառով խաղին չմասնակցեց 4-րդ լեգեոներ 17-ամյա Դմիտրի Ռադչենկոն, որն, ի դեղ, Մանվել Հայրապետյանի ղեկավարած «Սանկտ Պետերբուրգի» սանն է:

Առաջին տարի մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները.

«Արարատ» (Երեւան)-
«Աստղ» (Վանաձոր) 10-1
«Արմավիր» (Արմավիր)-
«Դինամո» (Երեւան) 3-0

Ս. Բ.

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

Ժելուդկովը հաղթանակ բերեց «Կադան-81-ին»

Արմավիրում սկսվել է մոտ անցյալի ֆուտբոլային հանրահայտ մրցավար Ռուդոլֆ Միխայլյանի հուշամրցաշարը: Առաջին տարում ուշադրության կենտրոնում էր նույն ոճիրների երկու թիմերի Գոլֆի «Զանգեզուրի», որը հանդես է գալիս բարձրագույն խմբում, եւ Կադանի «Կադան-81-ի» հանդիպումը: «Լեոնագարդին» փոխարինած այս թիմը շարունակելու է կուրբերն առաջին խմբում: Շնայած հիմա նախապատրաստական փուլն է, սակայն հանդիպումը սկզբունքային էր: Միշտ այդպես է, երբ իրար հետ հանդիպում են հարեւան քաղաքների կամ շրջանների թիմերը: Խաղի նկատմամբ հետաքրքրությունը բազմապատկվեց նաեւ նրանով, որ «Կադան-81-ի» կազմում անկախ Հայաստանի ֆուտբոլային պատմության ընթացքում առաջին անգամ հանդես էին գալիս ռուսաստանցի ակվանի ֆուտբոլիստներ: Հենց նրանցից մեկը Յուրի Ժելուդկովը, 35-ամյա դարձյալ «Զանգեզուրի» դարձյալ. 1-0 հաշվով հաղթանակ բերեց «Կադան-81-ին»:

Երեկ երեկոյան հանդիպեցի «Կադան-81» պրոֆեսիոնալ ակումբի գլխավոր մարզիչ Մանվել Հայրապետյանին: Անմիջապես հասկացա, որ նա, պատկերավոր ասած, ֆուտբոլային ֆանատ է: «Ազգն» արդեն գրել է, որ այս երիտասարդն ու նախկին ֆուտբոլիստը Սանկտ Պետերբուրգում տարիներ առաջ մանկապատանեկան ակումբ է ստեղծել, որն արդեն մեծ հաջողությունների է հասել: Նա նույն ձեւով ուզում է ծառայել նաեւ իր հարազատ Այուդիին: Այդպիսի երանդում ու նվիրված մարդկանց շնորհիվ է հնարավոր ոտի կանգնեցնել հայկական ֆուտբոլը:

Այն հարցին, թե մեծ ֆուտբոլի խաղարարությունը զգացած եւ լավ պայմաններին սովոր անվանի ֆուտբոլիստներն արդյոք չե՞ն հիասթափվի երկար ու անհաջող ճանապարհներից եւ կենցաղային ոչ լավ պայմաններից, Մանվել Հայրապետյանն ասաց. «Մենք նրանց կառաջարկենք հյուրանոց կամ բնակարան եւ իրենք ընտրություն կկատարեն: Բացի այդ, մենք հին ծանոթներ ենք եւ իրենք Հայաստան են եկել ոչ թե փափուկ պայմաններում մնալու կամ միայն ֆինանսների համար, այլեւ օգնելու մեր ֆուտբոլին: Մենք հեռանկարին ենք նայում եւ երկու-երեք տարի հետո լավ թիմ պետք է ունենանք, եւ ոչ միայն հանդես գանք բարձրագույն խմբում, այլեւ եվրոպական մրցաշարին մասնակցելու իրավունք ձեռք բերենք: Առանց լուրջ նոպատակների հաջողություն չի լինի: Մենք մանկապատանեկան ֆուտբոլի մեծ վտրտ ունենք եւ «Կադան-81-ը» շատ բանով կընդօրինակի «Սանկտ Պետերբուրգին»:

«Զանգեզուրի» հետ խաղում «Կադան-81-ը» հանդես եկավ այսպիսի կազմով.

Արմենակ Ստեփանյան, Ավետիք Սարգսյան, Վլադիմիր Դոլգորուկով, Գուրգեն Խաչատրյան, Արթուր Վարդանյան, Սասուր Միսիրարյան, Արթուր Շահնազարյան, Յուրի Ժելուդկով, Ալեն Սուվսիսյան, Արթուր Ղազարյան, Ալեքսանդր Կուզնեցով: Եղավ նաեւ 6 փոփոխություն:

Վնասվածքի պատճառով խաղին չմասնակցեց 4-րդ լեգեոներ 17-ամյա Դմիտրի Ռադչենկոն, որն, ի դեղ, Մանվել Հայրապետյանի ղեկավարած «Սանկտ Պետերբուրգի» սանն է:

Առաջին տարի մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները.

«Արարատ» (Երեւան)-
«Աստղ» (Վանաձոր) 10-1
«Արմավիր» (Արմավիր)-
«Դինամո» (Երեւան) 3-0

Ս. Բ.

ՖՈՒՏԲՈԼ

«Փյունիկը» վերադարձավ

Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության առաջին շրջանի հաղթող երեւանի «Փյունիկը» վերադարձավ Թուրքմենստանից, որտեղ մասնակցում էր այդ երկրի նախագահ Սափարմուրատ Նիյազովի ծննդյանը նվիրված եւ արդեն ավանդական դարձած գավաթի խաղարկությանը: Մեր թերթը գրել է, որ «Փյունիկը» գրավեց ընդհանուր 5-րդ տեղը: Թիմի գլխավոր մարզիչ Խոսրովն Հովհաննիսյանի հետ հեռախոսային զրույցի ժամանակ իմացանք որոշ մանրամասներ: Նախ, մրցաշարի լավագույն հարձակվող ճանաչվեց «Փյունիկի» եւ Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Արսեն Ավետիսյանը, որը պարգեւատրվեց Akai հեռուստացույցով: Մրցաշարի վերջում Թուրքմենստանի հավաքականը ընկերական խաղ անցկացրեց մասնակից մյուս 7 թիմերի խաղացողներից կազմված հավաքականի հետ: «Փյունիկիից» այդ թիմի կազմում ընդգրկված էին Վարդան Խաչատրյանը, Վարազդատ Ավետիսյանը եւ Արսեն Ավետիսյանը: Խաղին մասնակցելու հրավեր ուներ նաեւ Սարգիս Հովսեփյանը: Հավաքականի մարզիչներն էին Խոսրեն Հովհաննիսյանը եւ Ալեքսանդր Ստարկովը: Խաղն ավարտվեց Թուրքմենստանի հավաքականի հաղթանակով՝ 2-1 հաշվով:

«Մրցաշարը շատ լավ էր կազմակերպված եւ անչափ օգտակար էր: Մեզ ընդունեց Թուրքմենստանի նախագահ Սափարմուրատ Նիյազովը: Թիմի բոլոր ելույթներին ներկա էր Թուրքմենստանում Հայաստանի դեսպան Արամ Գրիգորյանը: «Փյունիկը» հիանալի ելույթ ունեցավ հայ հանդիսատեսի ներկայացուցիչների հետ: Ընդհանրապես խաղերին ներկա էին բոլոր այն երկրների՝ Ուկրաինա, Բելառուս, Էստոնիա, Հայաստան, Ղազախստան, Իրան, դեսպանները, որոնց թիմերը մասնակցում էին մրցաշարին: Տավոլ, առաջին խաղի ժամանակ լուրջ վնասվածք ստացավ մեր առանցքային խաղացողներից մեկը՝ Համլետ Մխիթարյանը, որն այդպես էլ ի վիճակի չեղավ մասնակցել մյուս խաղերին: Վնասվածքներ ստացան նաեւ Վարդան Մինասյանը, Տիգրան Սկրտչյանը, բացակայում էին Հայկ Մարգարյանը, Մեյրան Պողոսյանը, Արմեն Գալստյանը: Ինչպես ԱՊՀ գավաթի խաղարկությունում, այս անգամ էլ մեզ չհաջողվեց ստարեզ դուրս բերել մեր մարտական կազմին: Բոլոր դեպքերում տղաներն իրենց վատ չդրսեւորեցին: Մեր թիմը հաստատես լավ խաղաց Ռիգայի «Սկոնտոյի» հետ, որն արդեն մեծ հում էին 1-0 հաշվով, եւ ժամանակն էլ արդեն սպառվել էր, երբ մրցավարը նշանակեց 11 մետրանոց հարված, որն ազդեց խաղի ելքի վրա», ասաց Խոսրեն Հովհաննիսյանը:

ՈՒԵՖԱ-Ի ՆՈՐ ՕՐԵՆՔԸ

Ֆուտբոլային հեղաշրջում Եվրոպայում

Բոսմանի խնդիրը իրոք հեղաշրջում է առաջացրել ֆուտբոլային Եվրոպայում: Նորից մեր ընթերցողներին հիշեցնենք, որ բելգիացի ֆուտբոլիստ Բոսմանը, որի ֆրանսիական ակումբ տեղափոխվելու տրանսֆերը

ձախողվել էր, դիմել էր Եվրոպական միությունների գլխավոր դատարան, որ մեկ թիմում արտասահմանցի խաղացողների սահմանափակումը հակասում է Եվրամիության անդամ երկրներում գործող օրենքներին, ըստ որոնց միության անդամ երկրների քաղաքացիներն ազատ տեղաշարժի եւ աշխատանքի իրավունք ունեն: Եվրամիության գլխավոր դատարանը որոշեցրեց Բոսմանին, գտնելով, որ ՈՒԵՖԱ-ի ֆուտբոլային օրենքները հակասում են Եվրամիության օրենքներին: Հենց այդ որոշմամբ ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեն օրերս որոշում կայացրեց Եվրոպական ակումբներում լեգեոներների (օտարերկրյա խաղացողների) թվաքանակի սահմանափակումը վերացնել: Դա նշանակում է, որ «Միլանի» դեմ հարուստ թիմը կարող է գնել ոչ թե երեք, այլ 15 կամ ավելի օտարերկրացի խաղացողներ, եւ թիմը առաջարկ դուրս բերել ամբողջովին արտասահմանյան խաղացողներով կազմավորված: Շատերն այն կարծիքին են, որ դա մեծապես կազդի երկրների առաջնությունների վրա, կմեծանա խզվածքները եվրոպական հարուստ, ուժեղագույն ակումբների եւ թույլ թիմերի միջեւ: Բայց որոշ մասնագետներ էլ հակառակ կարծիքն են հայտնում, որ դա հնարավորություն կտա ուժեղացնել մրցակցությունը ոչ միայն ազգային առաջնություններում, այլեւ եվրոգավաթներում: Ինչ խոսք, հարուստ երկրների եւ հարուստ թիմերի համար լեգեոներների թվաքանակի սահմանափակման վերացման ՈՒԵՖԱ-ի նոր օրենքը միանգամայն ձեռնտու է: Ֆուտբոլային եվրոպան մասնատվում է:

ՍՏԼԱՆՏՍ-96

Բրազիլացիներն ու արգենտինացիները լրջորեն են տրամադրված

Բրազիլիայի եւ Արգենտինայի հավաքականները ֆուտբոլում հնարավոր բոլոր մրցանակներին արժանացել են, բազմաթիվ օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչման: Եվ ահա ֆուտբոլային այս երկրների հավաքականները ամենայն լրջությամբ են տրամադրված եւ ուզում են լրացնել բացը: Հարավային Ամերիկայի երկրների օլիմպիական ընտրական մրցաշարում Բրազիլիայի հավաքականը 4-1 հաշվով հաղթեց Պերուի թիմին, իսկ Արգենտինայի հավաքականը 6-0 հաշվով առավելության հասավ Էկվադորի հավաքականի նկատմամբ: Համառ պայքարում անցավ Վենեսուելա-Կոլումբիա հանդիպումը. 1-0 հաշվով հաղթեց Վենեսուելայի հավաքականը:

Բաժինը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ԿԱՊՊԱԲՌՎ-Համակարգիչ 6-րդ պարտիա

1. Ձf3 d5 2. d4 c6 3. c4 e6 4. Ձbd2 Ձf6 5. e3 c5 6. b3 Ձc6 7. Փb2 cd 8. ed Փe7 9. Նc1 0-0 10. Փd3 Փd7 11. 0-0 Ձh5 12. Նe1 Ձf4 13. Փb1 Փd6 14. g3 Ձg6 15. Ձe5 Նc8 16. Ձ:d7 Ø:d7 17. Ձf3 Փb4 18. Նe3 Նfd8 19. h4 Ձge7 20. a3 Փa5 21. b4 Փc7 22. c5 Նe8 23. Ød3 g6 24. Նe2 Ձf5 25. Փc3 h5 26. b5 Ձce7 27. Փd2 Ug7 28. a4 Նa8 29. a5 a6 30. b6 Փb8 31. Փc2 Ձc6 32. Փa4 Նe7 33. Փc3 Ձe5 34. de Ø:a4 35. Ձd4 Ձ:d4 36. Ø:d4 Ød7 37. Փd2 Նe8 38. Փg5 Նc8 39. Փf6+ Uh7

40. c6 bc 41. Øc5 Uh6 42. Նb2 Øb7 43. Նb4, սեւերը հանձնվեցին:

digitised by A.R.A.R.@

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

Աշխարհում տարեկան 500 միլիարդ դոլար է «լվացվում»

Միջազգային հանրությունը ուժեղացրել է պայքարը հանցագործ ճանապարհով ձեռք բերած փողերի օրինականացման, կամ ինչպես Արևմուտքում է ընդունված ասել, փողերի «լվացման» դեմ: Այդ խնդիրն այժմ ավելի է սրվել, քանի որ էլեկտրոնային տեխնիկայի սրընթաց զարգացման շնորհիվ երկրագնդի մի կետից մի ուրիշ կետ կարելի է առանց այդ գործողությունը թղթի վրա ֆիքսելու վայրկենաբար մեծ գումարներ փոխանցել: Հաշվված է, որ աշխարհում տարեկան մոտ 500 միլիարդ դոլար է «լվացվում»: Ենթադրվում է, որ այդ գումարն ավելի մեծ է, քան պարենի համար աշխարհում ամեն տարի ծախսվող գումարը: Փողերի «լվացման» դեմ մղվող պայքարում միջազգային ջանքերը միավորելու նպատակով «Մեծ յոթնյակի» ներկայացուցիչները 89 թվականին այսպես կոչված «Ֆինանսական գործողության» խումբ են կազմակերպել: Այդ խումբը 40 հանձնարարական ունեցող մի ցուցակ է ներկայացրել: Ֆինանսական բոլոր հիմնարկներին, մասնավորապես, հանձնարարվում է ավելի լավ ծանոթ լինել իրենց հաճախորդներին, ինչպես նաև դրամների անսովոր տեղաշարժերի ամեն մի գործողության մասին տեղյակ պահել դատախազությանը կամ ոստիկանությանը: Եվրամիության երկրներում այդ հանձնարարականները 93 թվականից պարտադիր են դարձել: Մեծ Բրիտանիայում, օրինակ, դրամական կասկածելի փոխադրումների թաքցնելը հանցագործություն է համարվում ու ազատազրկմամբ կամ տուգանքով է պատժվում:

Գերմանական դրամատները 20 հազար մարկից մեծ դրամական գործողությունները պարտավոր են գրանցել: Սակայն օրինաստեր գերմանացիներն էլ են խախտումներ անում: Գերմանական մի բանկ դրամատներ մեղադրվում են այն բանում, որ թմրանյութերի վաճառքից ստացված տարադրամն առանց հսկողության մարկերի են վերածել: Այսինքնում այժմ այդ մեղադրանքն է հետաքննվում:

Եվրամիության ներսում Ավստրիան է միայն, որը բանկային անանուն հաշիվներ է թույլ տալիս բացել: Այդպիսի հաշիվները շատ հարմար են հանցավոր ճանապարհով ձեռք բերած փողերը թաքցնելու համար: Եվրահանձնաժողովի ճնշման տակ Ավստրիան արդեն զիջումներ է արել. անցյալ երեքշաբթի օրվանից բաժնետոմսերի ու փոխառության տոմսերի անանուն վաճառքն այդ երկրում արգելվել է: Սակայն Ավստրիայի կառավարությունը չի հանձնում բանկային անանուն հաշիվները ևս արգելել, ինչը Բրյուսելի դժգոհությունն է առաջացրել: Ավստրիան մեկ տարուց միչ ավելի է, ինչ Եվրամիության անդամ է, և երկրում շատերն են դժգոհություն արտահայտում այդ կարգադրությամբ: Դրա պատճառով էլ Եվրահանձնաժողովի պահանջի հանդեպ Վիեննայի մերժողական կեցվածքը երկրի ներսում դրական արձագանքներ է գտել: Հասկանալի է, որ ավստրիական դրամատները էլ չեն ցանկանում, որ Եվրահանձնաժողովի պահանջը կատարվի: Իսկ Ավստրիայի էկոնոմիկայի նախարարն ասել է, որ բանկային անանուն հաշիվների արգելումը երկրից արտահոսքի վտանգի տարադրամի արտահոսքի վարկային կոդարների անկայունություն կառաջացնի և դա այն դեպքում, երբ Ավստրիայի դրամատները այժմ էլ լավ վիճակում չեն: Անդամ հիերարքի որը Եվրահանձնաժողովը նորից է խնդրանքով դիմել Ավստրիային, որպեսզի այդ երկիրը փակի բանկային անանուն բոլոր հաշիվները: Եթե բանկային գաղտնիության այդ տեսակն արգելվի՝ Ավստրիան կդադարի փողերի «լվացման» դրախտավայր համարվել: Այն անձանց համար, ովքեր ցանկանում են կասկածելի ճանապարհներով ձեռք բերված փողերը թաքցնել, ամենագրավիչ երկրները եվրոդայում ավանդաբար Շվեյցարիան կամ Լիխտենշտեյնն են եղել: Վերջին ժամանակներում, սակայն, Շվեյցարիան էական միջոցներ է ձեռնարկել, որպեսզի դրամատների գործունեության գաղտնիության հոդը վերացնի, ինչը առաջներում այդ երկրի բանկային համակարգի հիմնական հատկանիշն է եղել: Մեկ տարի առաջ դեռևս շվեյցարական դրամատներն իրավունք չունեին տեղեկություններ հայտնել այն հաճախորդների մասին, որոնց բանկային հաշիվները կասկած են առաջացրել: Այժմ դրամատներն այդ իրավունքը ստացել են, սակայն պարտավոր չեն դա անել, և այդ պատճառով էլ ոչ բոլոր դրամատներն են շտապում օգտվել իրենց օրինական իրավունքից: Շվեյցարիայի գլխավոր դատախազը վերջերս բողոքել է, որ ենթադրյալ շատ դեպքեր են արդարադատությունից խուսափել, քանի որ դրամատները որևիցե մեկին այդ մասին տեղյակ չպահելով՝ գերադասել են առանց ավելորդ աղմուկի փակել կասկածելի հաշիվները:

Փողերի «լվացման» դրախտավայրն այժմ Սեյշելյան կղզիներն են: Այդ պետությունը տնտեսական զարգացման մասին օրենք է ընդունել, ըստ որի ցանկացած ոք, ով պատրաստ է երկրում 10 միլիոն դոլար ներդնել՝ դիվանագիտական կարգավիճակ է ստանում: Այդ օրենքը միջազգային հանրության զայրույթն է առաջացրել և վախենալով, որ հանցավոր ճանապարհներով դրամ ձեռք բերած անձանց դա կարող է մագնիսի նման ձգել, արևմտյան երկրներն այժմ ճնշում են այդ երկրին: Սակայն արդյունքն:

Ի դեպ, հունվարի 18-ից Հայաստանն էլ է «դրախտավայր» դարձել: «Հայներարտբանկում» յուրաքանչյուր ոք կարող է բանկային անանուն հաշիվ բացել, ինչպես Շվեյցարիայում:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻԼ-ՏԵՐՊԱՆ

Իսկական ճակատամարտ Նովոգրոզնենսկում

Նախնական տվյալներով զոհվել է 170 զրոհային

Չեչնիայի Նովոգրոզնենսկ քաղաքի փողոցներում ընթանում են կատաղի մարտեր զրոհայինների և համապատասխան զինված ստորաբաժանումների միջև: ՌԴ համապետական զորքերի մեծ կորուստների գնով հաջողվել է գրավել քաղաքի մի մասը: Քաղաքում զրոհայինները ժամանակին կառուցել են պաշտպանական ամրություններ, որտեղից կրակի պատնեշի օգնությամբ հաջողվում է կանգնեցնել ստորաբաժանումների առաջխաղացումը: Զրոհայինների կրակակետերը ոչնչացնելու համար հատուկ զորքերն օգտագործում են «Գրադ» կայանքներ, հրետանի ու ականանետներ: Նախնական տվյալների համաձայն, զրոհայինները կորցրել են 170 մարդ: Վերջիններս դիմել են դուդաևականների կենտրոնակայանի ղեկ Ասլան Մասխադովին, խնդրելով օգնություն ուղարկել: ՌԴ զինվորական հրամանատարության հաղորդագրության համաձայն քաղաքում են գտնվում հազարից ավելի սպառազինված զրոհայիններ: Ինչպես նշում են ականատեսները, նորանոր զինտեխնիկա ու զինուժ է ժամանում Նովոգրոզնենսկ: Զինվորական հրամանատարությունն ամեն գնով ցանկանում է շտապիպ-գրավել քաղաքը, քանի որ հավատացած է, թե մեկ օրվա ընթացքում կստիպի քաղաքում գտնվող զրոհայիններին վայր դնել զենքը և հանձնվել իշխանություններին:

Շարունակ օրն է, ինչ զանգվածային լրատվական միջոցների աշխատակիցներին թույլ չեն տալիս մոտենալ քաղաքին: Վերջին տվյալների համաձայն Չեչնիայի տարբեր շրջաններում կրկին վերսկսվել են մարտական գործողությունները:

Գ. Ռ.

Կուրիլները Ճապոնիայի նոր քարտեզում

Երեքշաբթի օրը Ճապոնիայում լույս տեսած բոլոր թերթերը առաջին էջերում զետեղել են երկրի տնտեսական նոր քարտեզը, որտեղ ներգրավված են նաև Կուրիլյան կղզիները: Ճապոնական իշխանությունները լուրջ մտադրություն ունեն 200 մղոնանոց տնտեսական գոտի ստեղծել երկրի շուրջը, առանց հաշվի առնելու հարևան պետությունների քաղաքական և տնտեսական շահերը: Քաղաքական որոշ շրջանակներ եւ թերթեր մտավախություն են հայտնել, որ այս ծրագիրը կարող է բարդություններ առաջացնել հարևան երկրների, առաջին հերթին Ռուսաստանի հետ հարաբերություններում: Դեռևս հայտնի չէ պաշտոնական Մոսկվայի արձագանքը Տոկիոյի հերթական «զավթողական» գործողության նկատմամբ:

Օդային աղետ Գերմանիայում

ԲՈՆՆ, 20 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ. Գերմանիայի եւ Ավստրիայի սահմանագլխին փետրվարի 19-ին կործանվեց մի օդանավ, որի հետեւանքով զոհվել են բոլոր ութ ուղեւորներն ու երկու օդաչուները: Այն վայր է ընկել Զալցբուրգի մոտակայքում: Կործանումից հետո հրդեհ է բռնկվել: Աղեղի պատճառներն առայժմ չեն ճշտվել:

«ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ԵՐԵՎԱՆ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ» ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՐԱԹՈՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի հայրենակիցներ,

«Հայասան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության եւ ԱՄՆ Արեւմտյան ափի (Կալիֆորնիա) հանձնախմբի նախաձեռնությամբ կազմակերպվում է Ազգային տուրքի մարաթոն «Ստեփանակերտ-Երեւան-Լոս Անջելես» ընդհանուր խորագրով:

Մարաթոնը սկիզբ է առնում մարտի 24-ին Ստեփանակերտում կազմակերպվելիք Ազգային տուրքի հանդիսությամբ եւ զուգահեռաբար տարածվում աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում, որտեղ նաեւ կազմակերպվում են Ազգային տուրքի հավաքներ ու հանդիսություններ: Աղրիլի 7-ին Ազգային տուրքի հանդիսությունն կկազմակերպվի Երեւանում:

Մարաթոնը կտեւի 63 օր եւ կավարտվի մայիսի 27-ին Լոս Անջելեսում կազմակերպվելիք 12 ժամանոց հեռուստամարաթոնով, որի ընթացքում կամփոփվեն մարաթոնի արդյունքները առանձին ներկայացնելով յուրաքանչյուր համայնք:

Մեր նպատակն է Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում եւ համայն սփյուռքում քարոզել Ազգային տուրքի գաղափարը եւ հնարավորին չափ մեծ թվով հայերի մասնակից դարձնել Հիմնադրամին: Մարտի 24-ից մինչեւ մայիսի 27 ժամանակահատվածում Հիմնադրամին կատարված բոլոր հատկացումները հայտարարվելու են հեռուստամարաթոնի ընթացքում:

Ձեր Ազգային տուրքը տրամադրվելու է Հիմնադրամի այն ծրագրերին, որոնք կարեւորագույն նշանակություն ունեն Լեռնային Ղարաբաղի տնտեսության եւ ընդհանուր կենսագործունեության համար: Անցած երեք տարիների ընթացքում Հիմնադրամին հատկացված Ազգային տուրքով Լեռնային Ղարաբաղում կառուցվել են չորս էլեկտրահաղորդման գծեր եւ ենթակայաններ, չորս ջրատարներ, 20 կիլոմետրանոց մեկ ավտոճանապարհ, իսկ մոտավորապես 10 միլիոն ԱՄՆ դոլարի ծրագրեր ներկայումս ընթացքի մեջ են, որոնք ողջամիտ է ավարտել հնարավոր սեղմ ժամկետներում:

Հայտարարելով Ազգային տուրքի մարաթոն կազմակերպելու մեր մտադրությունը, կոչ ենք անում երկրանի ողջ հայությանը՝ կազմակերպություններին ու անհատ անձանց, մասնակցություն բերել «Հայասան» համահայկական հիմնադրամի «Ստեփանակերտ-Երեւան-Լոս Անջելես» Ազգային տուրքի մարաթոնին:

Մեր համախմբում-միասնությունը ու մեր ազգային նպատակները կարող են իրականություն դառնալ, եթե մենք՝ ամենս ու բոլորս միասին, մասնակից լինենք դրանց լուծմանը:

«Հայասան» համահայկական հիմնադրամի
գործադիր վարչություն
«Հայասան» համահայկական հիմնադրամի
ԱՄՆ Արեւմտյան ափի հանձնախումբ

«Ստեփանակերտ-Երեւան-Լոս Անջելես» Ազգային տուրքի մարաթոնի ծրագիրը եւ կազմակերպական ընթացքը ներկայացնելու նպատակով «Հայասան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությունը փետրվարի 22-ին ժամը 12-ին հրավիրում է մամուլի ասուլիս:

ԱՅԱՔՍ

Ֆիրման փետրվարի 26-ից մարտի 4-ը կազմակերպում է տուրիստական ուղեւորություն
ԵՎՐՈՊԱ
ԿԱՀԻՐԵ՝ 3 օր, ԱԼՊԵՐՆԻԱ՝ 4 օր
Հանգիստ շրջագայություն, ծանոթություն մշակույթին
Հյուրանոց 630 ԱՄՆ դոլարի համարժեքով
Հյուրանոց 670 ԱՄՆ դոլարի համարժեքով
Հյուրանոց 710 ԱՄՆ դոլարի համարժեքով
Հրավեր՝ Հ. Բոյաջյանի 1-ին հարկ
ՊՈՒՇԿԻՆԻ 43Ա. 531573. 524564

@rminco
Global Telecommunications
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ
ԱՐՄԻՆԿՈ ԱՅՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.
✔ էլեկտրոնային փոստ (E-mail)
✔ INTERNET հարուստ տվյալների բազայի մուտք
✔ Օրերաշիվ ինֆորմացիա ամբողջ աշխարհից Ձեր կոմպյուտերի էկրանի վրա
✔ Հնարավորություն Ձեր մասին տեղեկացնելու ամբողջ աշխարհին
Մեր հասցեն.
Երեւան, Իսահակյան 28, 3 հարկ
✆ 52-63-26, Fax: 28-50-82
E-mail: support@arminco.com.

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Սարալանջ 2 ... 69149 ... 3000 Պատվերով է տպագրված 19.02.1996 գինը 75 դրամ

digitised by A.R.A.R.@